

**ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ՎՐԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋ.
ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
Սարգիս Հարությունյան**

Ներկայումս հարավկովկասյան աշխարհաքաղաքական շարժերի համատեքստում՝ Ղարաբաղյան գործընթացից զատ, աչքի են ընկնում Վրաստանի շուրջ ծավալվող զարգացումները: Հանդիսանալով հարավկովկասյան status quo-ի փոփոխությանը միտված առաջնային մեխանիզմներ՝ համակարգային առումով նշված զարգացումները փոխլրացում են միմյանց:

Ռուս-վրացական հարաբերություններ

Մոտավորապես զարման սկզբներից, գերազանցապես ռուսական կողմի նախաձեռնությամբ, փորձ արվեց վերանայել ռուս-վրացական հարաբերությունները: Հասկանալի է, որ «Մեծ ութնյակի» պետերբուրգյան գագաթաժողովին ընդառաջ՝ Մոսկվայի համար նոր նշանակություն էր ստացել նաև հարավկովկասյան ուղղությամբ սեփական ազդեցության ընդլայնման խնդիրը:

Գլխավորապես այդ իմաստով պետք է ընկալել Ռուսաստան վրացական գիւնիների ներմուծման արգելքից հետո ռուսական կողմի բոլոր նախաձեռնությունները: Ըստ ամենայնի, դրանց տրամաբանական ավարտն էր հունիսի 1-ին Ռուսաստանի արտգործնախարարության ներկայացուցիչ Միխայիլ Կամինինի՝ բնույթով աննախադեպ հայտարարությունը, թե Մոսկվայում հարգանքով են վերաբերվում երկրների տարածքային ամբողջականության սկզբունքին, սակայն, միեւնույն ժամանակ, Հարավային Օսիայի ինքնորոշման իրավունքը ոչ պակաս հարգանքի արժանի սկզբունք է:

Կամինինի հայտարարության մեջ առանձնանում էր այն հանգամանքը, որ պաշտոնական Մոսկվան ոչ թե ընդհանուր առմամբ կարելորում էր ազգերի ինքնորոշման իրավունքը, այլ խոսքը վերաբերում էր կոնկրետ Հարավային Օսիային:

Բացի այդ, դիվանագիտական խողովակներով Ռուսաստանն ամեն ինչ արեց, որպեսզի վրացական կողմին հասու լինի ինքնահռչակ երեք հանրապետությունների՝ Աբխազիայի, Մերձդնեստրի եւ Հարավային

Օսիայի ղեկավարների՝ հունիսի 14-ին Սուխումում ծրագրված հանդիպման վերաբերյալ գրեթե ողջ տեղեկատվությունը:

Մյուս կողմից, Մոսկվայի հետ բանակցությունների գնալու վրացական դիվանագիտության հիմքում ընկած էին հետեւյալ դրույթները՝

- ❖ Վրաստանը փաստացի ազատվել է ռուսական ռազմական ներկայությունից,

- ❖ վրացական վերնախավում եկել են այն համոզման, որ առաջիկայում իրենց երկիրն անդամակցելու է Հյուսիսատլանտյան դաշինքին,

- ❖ հետեւաբար, նպատակ կա հնարավորինս փոքրացնել Ռուսաստանի բացասական հակաքայլերը:

Այդ իմաստով, Սահակաշվիլու վարչակարգը՝ որպես «զիջման կետ», անցած ամիսների ընթացքում նախապատրաստել էր (հատկապես տեղեկատվական հարթությունում) Հարավային Օսիայից եւ Աբխազիայից ռուս խաղաղապահների դուրսբերման հարցը: Պետք է ենթադրել, որ հունիսի 13-ին Սանկտ Պետերբուրգ Վրաստանի նախագահը մեկնում էր հենց այդ կետում զիջումների գնով Պուտինից փոխհատուցում ստանալու ակնկալիքով (օրինակ, վրացական արտադրանքի առջեւ ռուսական շուկայի վերաբացում):

Ինչեւէ, հունիսի 13-ին Ս. Պետերբուրգի «Կոնստանտինյան» պալատում ավելի քան երեք ժամ տեւած Պուտին–Սահակաշվիլի բանակցություններն ավարտվեցին առանց որեւէ կոնկրետ պայմանավորվածության: Ենթադրաբար, հուլիսի 20-ին կողմերը կրկին հանդիպելու են, սակայն փոխհամաձայնության հանգելու հնարավորությունն անհամեմատ փոքր է լինելու:

Ամերիկա-վրացական հարաբերություններ

Թեեւ 2006թ. մարտ-հունիս ամիսներին տարածաշրջանում ամերիկյան քաղաքականության առաջնային խնդիրն էր Ղարաբաղյան հիմնահարցը, սակայն, միեւնույն ժամանակ, ոչ պակաս կարեւոր էր ԱՄՆ հարավկովկասյան դիվանագիտության վրացական ուղղությունը:

Տվյալ պարագայում Վաշինգտոնի նպատակը մաս էր կազմում ավելի ընդհանրական մի գծի, որը, ներառելով նաեւ եվրոպական թատերաբեմում ամերիկյան դիվանագիտական նախաձեռնությունները (որոնց գագաթնակետը հանդիսացավ հունիսի 21-ին Վիեննայում կայացած

ԵՄ–ԱՄՆ գազաթափողովը) եւ Ուկրաինայի ուղղությամբ տարվող աշխատանքը (պատահական չէ, որ Վիեննայի գազաթափողովին զուգահեռ Կիեւում նույն՝ հունիսի 21-ին հայտարարվեց «Նարնջագույն» կոալիցիայի ձեւավորման մասին), նպատակ ունենալով «Մեծ ութնյակի» պետերբուրգյան գազաթափողովից առաջ բավական լուրջ ճնշում գործադրել Ռուսաստանի ուղղությամբ՝ Իրանի, Մերձավոր Արեւելքի, Չարավային Կովկասի եւ Կենտրոնական Ասիայի հարցերով զիջումներ կորզելու ակնկալիքով:

Նշված ժամանակահատվածում Միացյալ Նահանգների վրացական քաղաքականության մեջ աստիճանաբար ավելի ակնառու դարձան աբխազական ու հարավօսական հակամարտությունների առնչությամբ նոր նախաձեռնությունները, ինչը նախ եւ առաջ նշանակում էր ճնշում Ռուսաստանի նկատմամբ:

Մայիս-հունիս ամիսներին Քոնդոլիզա Ռայսի Եվրոպայի ու Եվրասիայի հարցերով փոխօգնական Մեթյու Բրայզան երկու անգամ այցելելով Սուխում՝ հանդիպումներ ունեցավ Աբխազիայի ռազմաքաղաքական բարձրաստիճան ղեկավարության ներկայացուցիչների՝ ներառյալ նախագահ Սերգեյ Բազապչի հետ: Ի հավելումն, նույն հունիսի սկզբներին բրիտանական հատուկ ծառայությունների հետ որոշակի կապեր ունեցող «Conciliation Resources» հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ, Աբխազիայի փոխվարչապետ Լեոնիդ Լակերբայայի գլխավորությամբ ներկայացուցչական պատվիրակություն այցելեց Լոնդոն եւ Վաշինգտոն: Երկու մայրաքաղաքներում էլ վերջիններս աննախադեպ հանդիպումներ ունեցան այդ երկրների արտաքին քաղաքական գերատեսչության ներկայացուցիչների հետ:

Չատկանշական է, որ ամերիկա-բրիտանական դիվանագիտական ջանքերին համընթաց՝ մայիսի 28-ից հունիսի 15-ը («Մեծ ութնյակի» գազաթափողովի սկիզբ) Ախալցխայի մոտ գտնվող «Օրֆոլո» զորավարժարանում տեղի ունեցան վրացական բանակի «Կովկաս-2006» անվամբ լայնածավալ զորավարժությունները, որոնց մասնակցում էին Վրաստանի զինված ուժերի մոտ 8 հազար մարտիկներ (ողջ բանակի շուրջ 1/4-րդը):

Չատկապես աբխազական գործընթացում նման կերպ (դիվանագիտության եւ վրացական ռազմուժի կիրառման սպառնալիքի համատեղմամբ) ներգրավվելու Վաշինգտոնի հիմնական նպատակն է հող նախապատրաստել Աբխազիայում ռուսական ազդեցության նվազման համար կամ առնվազն այդ նախաձեռնությունների միջոցով ճնշում գործադրել Ռուսաստանի նկատմամբ: Պատահական չէ, որ հունիսի 19-ին Բազապչի

հետ կայացած հանդիպման ժամանակ Բրայզան վերջինիս կոչ արեց ընդլայնել կապերը Եվրոպայի հետ: Չպետք է մոռանալ նաև, որ 2004թ. հոկտեմբերին Աբխազիայում կայացած նախագահական ընտրությունների ժամանակ Մոսկվան անմիջականորեն սատարում էր ներկայիս նախագահ Սերգեյ Բազապչի հակառակորդին՝ Ռաուլ Խաջիմբային: Չետագայում այդ հանգամանքը պատճառ հանդիսացավ ռուս-աբխազական հակասությունների ի հայտ գալուն:

Սակայն անցած ժամանակահատվածում ամերիկա-վրացական հարաբերություններում տեղի ունեցած էական շարժը վերաբերում է Չյուսիսատլանտյան դաշինքին Վրաստանի անդամակցության հարցին:

Չունիսի 9-ին ԱՄՆ Սենատի կողմից ձայների մեծամասնությամբ ընդունված մի բանաձևի համաձայն, ԱՄՆ նախագահ Բուշ-կրտսերը պետք է Միացյալ Նահանգների Կոնգրեսին ներկայացնի «Էներգիայի պաշտպանված, կայուն եւ վստահելի աղբյուրների ապահովման վերաբերյալ ՆԱՏՕ-ի ռազմավարության մասին» մանրամասն զեկույց՝ «ներառյալ չնախատեսված իրավիճակներին առնչվող ծրագրերի մասին, եթե էներգիայի ներկայիս աղբյուրները վտանգի ենթարկվեն»: Բանաձևի ընդունումը, որի հեղինակը Սենատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ, ԱՄՆ Սպիտակ տանն ունեցած ազդեցությամբ հայտնի հանրապետական սենատոր Ռիչարդ Լուգարն է, խոշոր հաշվով ունի մեկ նպատակ՝ ապահովել ամերիկյան ռազմաքաղաքական ներկայության հետագա ինստիտուցիոնալացումը Չարավային Կովկաս-Կասպիցի ավազան-Կենտրոնական Ասիա հատվածում: Բայց գործնականում բանաձևի հիմնական իմաստն այն է, որ Վաշինգտոնը հրապարակեց ՆԱՏՕ-ին առնվազն Վրաստանի անդամակցության իր քաղաքական որոշումը:

Չունիսի 5-ին ամերիկյան Սպիտակ տանը կայացած Բուշ-Սահակաշվիլի հանդիպման ժամանակ ԱՄՆ նախագահի հայտարարությունը Չյուսիսատլանտյան դաշինքին Վրաստանի անդամակցության փոխշահավետության մասին՝ խոսում է միայն այդ եզրակացության օգտին:

Ընդհանրացումներ եւ հեռանկար

Չետագա զարգացումները ցույց տվեցին, որ հունիսի 13-ին Սանկտ Պետերբուրգում կայացած Պուտին-Սահակաշվիլի հանդիպման հիմնական թեման ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցության հարցն էր: «Կոնստանտինյան» պալատում տեղի ունեցած մի քանի ժամյա քննարկումների ապարդյուն լինելը նշանակում է, որ ռուսական դիվանագիտութ-

յան համար էական նշանակություն ունեցող այդ հարցում փոխհամաձայնություն ձեռք չի բերվել:

Այդ առումով ամենեւին էլ պատահական չէ, որ ռուսական կողմը ձեռնամուխ եղավ Վերին Լարս անցակետի փակմանը Սահակաշվիլու Վաշինգտոն կատարած այցից անմիջապես հետո՝ հուլիսի 8-ի վաղ առավոտյան:

Մյուս կողմից, կառավարական ճգնաժամը եւ ընդհանուր ներքաղաքական լարվածությունն Ուկրաինայում նախ եւ առաջ ամերիկյան դիվանագիտությանը թույլ չտվեցին «Մեծ ութնյակի» գազաթափողովին ընդառաջ նաեւ այդ ուղղությամբ լուրջ ճնշումներ բանեցնել Ռուսաստանի նկատմամբ: Այդ առումով հատկանշական է, որ Պենտագոնին այդպես էլ չհաջողվեց անցկացնել հուլիսի 18-ին Ղրիմում նախատեսված ՆԱՏՕ-ական «See Breeze-2006» զորավարությունները:

Չեռանկարային առումով հարավկովկասյան աշխարհաքաղաքական փոխդասավորվածության համար էական նշանակություն է ձեռք բերում Յուլիսատլանտյան դաշինքին Վրաստանի անդամակցության հարցը: Թեեւ սույն նոյեմբերին Ռիգայում կայանալիք ՆԱՏՕ-ի հերթական գազաթափողովի ժամանակ, ամենայն հավանականությամբ, նշվելու են միայն Խորվաթիայի, Մակեդոնիայի ու Ալբանիայի անունները, որոնք կարող են դիմել դաշինքին անդամակցելու հարցով, սակայն եւս երկու տարի անց՝ 2008թ., շատ մեծ է հավանականությունը, որ նրանց ճակատագրին կարժանանա Վրաստանը:

Մինչ օրս առկա միջազգային փորձի համաձայն, նման հրավերի ստացումից մինչեւ անդամակցությունը տեւում է միջինը երկու տարի: 1997թ. Մադրիդում կայացած ՆԱՏՕ-ի գազաթափողովի ժամանակ հրավեր ստացած Լեհաստանը, Յունգարիան ու Չեխիան դաշինքի անդամ դարձան 1999թ., իսկ 2002թ. Պրահայի գազաթափողովի ժամանակ հրավիրված Էստոնիան, Լատվիան, Լիտվան, Սլովակիան, Սլովենիան, Ռումինիան ու Բուլղարիան ՆԱՏՕ-ին անդամակցեցին 2004թ.:

Ի դեպ, ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցության պարագայում Չայաստանը կարող է գործնականում կորցնել Չավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության գծով իր հիմնական դաշնակցի՝ Ռուսաստանի հետ ցամաքային ու օդային հաղորդակցության հնարավորությունը, միաժամանակ, մեր երկրի տարածաշրջանային անվտանգության ու Ղարաբաղյան հիմնահարցի համատեքստում, ամենայն հավանականությամբ, ի հայտ կգան նոր իրողություններ:

**ՌՈՒՄ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՐԴԻ ՓՈՒԼԸ
Արտակ Շաքարյան**

Վերջին ժամանակներս Միջին Ասիայի ու Կովկասի համար իրար հետ ավանդաբար մրցակցող Ռուսաստանն ու Թուրքիան այդ տարածաշրջաններում համագործակցության ուղիներ են փնտրում:

Այս շրջանակներում արվող փոխադարձ այցերի շարանին ավելացավ եւս մեկը. Թուրքիայի նախագահ Ահմեդ Նեջդեդ Սեզերն ու ԱԳ նախարար Աբդուլահ Գյուլը հունիսի 29-ին Մոսկվայում հանդիպում ունեցան Վլադիմիր Պուտինի հետ: Նույն օրը Ա.Ն.Սեզերը շարունակեց իր մոսկովյան հանդիպումներն ու երկկողմանի հարաբերությունները քննարկեց Դումայի խոսնակ Բորիս Գրիզլովի հետ:

Նախքան թուրք բարձրաստիճան պաշտոնյաների այցը՝ երկու երկրների հարաբերությունների ներկա մակարդակի վերաբերյալ թուրքական «Ջաման» օրաթերթին հարցազրույց տված Ռուսաստանի Արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի վարիչ Նատալյա Ուլչենկոն, մասնավորապես, նշել էր, թե «Մոսկվան հատկապես վերջին տարիներին ազատվել է Միջին Ասիայի հետ կապված Թուրքիայի վերաբերյալ երկյուղներից»: Ռուս մասնագետն ընդգծել էր, որ շատ ու շատ հարցերում Անկարայի ու Մոսկվայի տեսակետները համընկնում են, իսկ երկու երկրների միջև քաղաքական համագործակցությունը գտնվում է «բավարար մակարդակի» վրա: Համաձայն Ուլչենկոյի՝ «Երկնագույն հոսք» սեւծովյան գազատարի գործարկումն ու Բաքու – Թբիլիսի – Ջեյհան նավթատարից առաջին նավթի ստացումը նշանավորում են տարածաշրջանում նոր՝ էներգետիկ դարաշրջանի սկիզբ, եւ երկու երկրները, շնորհիվ իրենց զարգացած հարաբերությունների, կարող են ստեղծել նոր ձգողության կենտրոն՝ նախաձեռնելով գիտության ու բարձր տեխնոլոգիաների վրա հիմնված ընդհանուր նախագծեր: «Երկնագույն հոսք» գազատարի հետ կապված՝ հիշեցնենք, որ Ռուսաստանը պնդում է, թե պետք է այն երկարացվի մինչեւ Հունաստան, Իտալիա եւ Իսրայել, ինչին դեմ են Միացյալ Նահանգները: ԱՄՆ-ը չի ցանկանում, որ Ռուսաստանի էներգետիկ մենիշխանության հաստատման գործում Անկարան ունենա իր թեկուզեւ համեստ դերակատարումը: Սակայն Անկարան չի կարող այդքան հեշտությամբ դուրս գալ խաղից: Թուրքիային նույնպես ձեռնտու է դառնալ որքան հնարավոր է շատ էներգետիկ ուղիների հանգուցային միջանցիկ

կենտրոն եւ ինքն, իր հերթին, բազում առաջարկներ ունի: Դրանցից է, մասնավորապես, սեւծովյան Սամսուն քաղաքից միջերկրածովյան Ջեյհան նավահանգիստ տարվելիք նավթամուղի նախագիծը:

Մոսկվայում Թուրքիայի դեսպան Քուրթուլուշ Թաշքենը Սեզերի այցից առաջ տված հարցազրույցում նույնպես ընդգծեց, որ ռուս-թուրքական հարաբերություններն այսօր գտնվում են «ամենից բարձր մակարդակի վրա»: Նա եւս նշեց, որ Թուրքիայի ու Ռուսաստանի միջեւ չկա տարածայնություն միջազգային կամ տարածաշրջանային հնչողություն ունեցող ոչ մի հարցում՝ մասնավորապես, շեշտելով Մոսկվայի ու Անկարայի միանման մոտեցումներն Իրանի, Իրաքի ու Պաղեստինի հարցերում:

* * *

Անցած մեկ տարվա ընթացքում նախագահ Պուտինն ու վարչապետ Երդողանը տարբեր առիթներով հանդիպել են 4 անգամ, ինչը նշում է հարաբերությունների վերին աստիճանի զարգացած ու ռազմավարական լինելու մասին:

Երկու երկրների միջեւ բարձրաստիճան պաշտոնյաների միջեւ փոխադարձ այցերի թիվը քանակային ցուցիչ է, որը ցույց է տալիս միջպետական հարաբերությունների որակական կողմը: Դեռ 1999թ. Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինը չընդունեց Մոսկվայում պաշտոնական այցով գտնվող Թուրքիայի վարչապետ Բյուլենթ Էջելիթին, սակայն երբ ուսումնասիրում ենք դրան հաջորդած տարիներին տեղի ունեցած Մոսկվա-Անկարա երթելեկությունը, ապա համոզվում ենք, որ անցած 6 տարիների ընթացքում ռուս-թուրքական հարաբերությունները կրել են որակական տեղաշարժ:

Սեպտեմբերի 11-ը մեծ փոփոխություններ մտցրեց թե՛ ամբողջ աշխարհի, թե՛ տարածաշրջանի ուժային հաշվեկշռի մեջ, ինչն, անշուշտ, չէր կարող չանդրադառնալ ռուս-թուրքական հարաբերությունների վրա: Շրջադարձային այդ իրադարձությունից հետո ռուս-թուրքական առաջին հանդիպումը տեղի ունեցավ 2002թ. սեպտեմբերին, Նյու Յորքում: ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինն ու Թուրքիայի նախագահ Ահմեդ Նեջդեդ Սեզերն այդ քաղաքում մասնակցում էին «Հազարամյակի զագաթաժողովին»: Հանդիպման ընթացքում Սեզերն իր ռուս գործընկերոջը հրավիրեց Թուրքիա. 2004թ. դեկտեմբերին թուրք-ռուսական հարաբերություններում գրանցվեց շրջադարձային իրադարձություն՝ Անկարա պաշտոնական այց կատարեց Ռուսաստանի Դաշնության նախագահը: Ռուս-թուրքական հարաբերությունների ողջ պատմության ընթացքում սա ռուս ղեկավարի առաջին այցն էր, եթե հաշվի չառնենք 1972թ. Անկարա այցելած ԽՍՀՄ ԳԽ նախագահ Նիկոլայ Պոդգորնին:

Վ.Պուտինի այցին անմիջապես հաջորդեց Թուրքիայի վարչապետ Ռ.Թ.Էրդողանի այցը Մոսկվա: Դրանից հետո Էրդողանն ու Պուտինը եւս մեկ անգամ հանդիպեցին Սոչիում, Պուտինը եւս մեկ անգամ այցելեց Թուրքիա 2005թ. վերջին, երբ սեւծովյան Սամսուն քաղաքում պաշտոնապես բացվեց «Երկնագույն հոսք» գազատարը: Պուտինի ու Էրդողանի միջեւ հաստատվեց նույնիսկ ուղիղ հեռախոսակապ՝ առավել հրատապ խնդիրները քննարկելու համար:

2006թ. մայիսին Ռուսաստանի Դաշնության Անվտանգության խորհրդի քարտուղար Իգոր Իվանովի հրավերերով եռօրյա աշխատանքային այցով Մոսկվա ժամանեց նրա թուրք գործընկեր՝ Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդի գլխավոր քարտուղար Յիդիթ Ալփոզանը: Դրանից հետո՝ 2006թ. մայիսին Անկարա այցելեց ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովը:

Թուրքիայի նախագահ Ահմեդ Նեջդեդ Սեզերի պաշտոնական վերջին այցը Մոսկվա այս այցերի տրամաբանական շարունակությունն էր: Ի դեպ, նշենք, որ նախապատրաստվում է նաեւ Թուրքիայի խորհրդարանի նախագահ Բյուլենթ Արընչի այցը Ռուսաստան:

* * *

Ի՞նչ սպասումներ ունեն Անկարան իր նախագահի այցից: Ռուս-թուրքական հարաբերությունների մի շարք մասնագետներ նշում են, որ այսօր Անկարան սերտորեն կապված է Մոսկվայի հետ ու մեծ ռազմավարական աջակցություն է ցույց տալիս նրան, ինչի համար, ըստ թուրք վերլուծաբանների, ժամանակն է, որ Կրեմլը փոխադարձ քայլեր անի:

Այսպես, սեւծովյան նեղուցների հարցում Թուրքիան Ռուսաստանին համահունչ քաղաքական դիրք բռնեց եւ ներկայումս թույլ չի տալիս, որ Միացյալ Նահանգները մուտք գործի Սեւ ծով: Այս առումով, ռուսները պետք է որ շատ զոհ լինեն թուրքերից:

Դրանից բացի, թուրք վերլուծաբանները նշում են, որ Իրանի ու Իրաքի հարցերում Անկարան միանշանակորեն համաձայն չէ Վաշինգտոնի մոտեցումներին, ինչով ավելի մոտ է կանգնած Մոսկվային: Թուրքիան նաեւ աջակցել է Ռուսաստանին՝ Իսլամական կոնֆերանս կազմակերպության հետ կապված հարցերում:

Սակայն ամենամեծ նշանակությունն ունի Թուրքիայի աջակցությունը ռուսական գազային քաղաքականությանը: Դիմադրելով ԱՄՆ ճնշումներին՝ Թուրքիան իր տարածքն է տրամադրում Ռուսաստանին՝ խողովակաշարերը դեպի Հարավային Եվրոպա ու Իսրայել ուղղելու համար:

էական նշանակություն ունեն նաեւ թուրք-ռուսական տնտեսա-առեւտրային հարաբերությունները: Համաձայն ռուսական վիճակագրության՝ 2005թ. ապրանքաշրջանառությունը երկու երկրների միջեւ կազմել է 12,6 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ թուրքական տվյալներով՝ 15,3 մլրդ: Ռուսաստանում թուրքական ներդրումների ծավալը հասնում է 2 մլրդ ԱՄՆ դոլարի: Թուրք-ռուսական հարաբերությունների բարձր մակարդակի մասին է վկայում նաեւ այն, որ Ռուսաստանը, Անարայում դեսպանատնից բացի, հյուպատոսարաններ ունի Ստամբուլում ու Անթալիայում, իսկ Թուրքիան պատրաստվում է հյուպատոսարան բացել Ռուսաստանի հյուսիսային մայրաքաղաքում:

Այս ամենի փոխարեն Անկարան սպասում է, որ Ռուսաստանը բարեկամական ժեստեր անի հետեւյալ կետերի շուրջ.

Կիպրոս. Ռուսաստանը՝ որպես ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հիմնական անդամ, կարող է մեծ դեր խաղալ հարցի թուրքամետ լուծման խնդրում, սակայն մինչեւ այժմ նա բռնել է հունամետ դիրքորոշում: Ռուսաստանը ոչ միայն չի ճանաչում ինքնահռչակ Հյուս. Կիպրոսի թուրքական հանրապետությունը, այլեւ չի դադարեցնում էմբարգոն ու տնտեսական ոչ մի հարաբերություն չունի նրա հետ: Անկարան սպասում է, որ Մոսկվան ավելի ակտիվորեն կաջակցի Կիպրոսի հարցում:

Հայերի ցեղասպանություն. Թուրք վերլուծաբանները Ռուսաստանում ցեղասպանության վերաբերյալ որոշումներ ընդունելու խնդիրը կապում են այդ երկրում ավելի քան 2 մլն հայ ապրելու ու մեծ լոբբի ունենալու հանգամանքի հետ: Սակայն վերջերս նրանք նկատում են այս հարցում ռուսական քաղաքականությունում թուրքամետ մոտեցումներ: Մասնավորապես, ընդամենը մեկ ամիս առաջ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովը հայտարարեց, թե «որքան էլ ցեղասպանության խնդիրը կարելու լինի հայերի համար, այն չի կարող որոշիչ դեր ունենալ ռուս-թուրքական հարաբերություններում. դա պատմաբանների գործն է, ու չպետք է այն դարձնել քաղաքական գործիչների գործիք», ինչը համահունչ է պաշտոնական Անկարայի մոտեցումներին: Թուրքիան Ռուսաստանից այս հարցում ավելի հստակ մոտեցումներ է պահանջում:

Քրդստանի բանվորական կուսակցություն. Ռուսաստանը դեռ այս կազմակերպությունը չի մտցրել ահաբեկչական կազմակերպությունների իր ցանկ, ինչպես դա պնդում է Անկարան: Թուրքերը հավատացած են, որ ահաբեկչությունից մեծ կորուստներ կրած Մոսկվան վերջիվերջո դա կանի, սակայն ակնհայտ է, որ Ռուսաստանը քրդական խաղաքարտը կպահի այնքան ժամանակ, որքան Անկարան՝ չեչենականը:

ՄԱԿ-ի Աև ժամանակավոր անդամակցություն. Թուրքիան ցանկություն ունի 2009–2010թթ. դառնալ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի

ժամանակավոր անդամ, իսկ Ռուսաստանը՝ որպես նույն խորհրդի մշտական անդամ, մեծ դերակատարում կարող է ունենալ այս հարցում: Լավրովն իր այցի ժամանակ խոստացել է օգնել:

Սամսուն – Ջեյհան. Անկարայի սպասումների հիմնական ցանկը եզրափակում է էներգետիկան: Այսօր ակտիվորեն քննարկվում է «Երկնագույն հոսք-2» նոր գազատարի շինարարության հարցը, իսկ Անկարան Մոսկվային առաջարկում է ընդգրկվել սեւծովյան Սամսուն քաղաքից միջերկրածովյան Ջեյհան նավահանգիստ նավթատարի կառուցման նախագծում. այն կթեթեւացնի սեւծովյան նեղուցների երթելեկությունն ու դեպի Արեւմուտք գնացող ռուսական նավթի մայրուղի կհանդիսանա: Ռուսական կողմն, իր հերթին, նախապատվություն է տալիս Բալկաններով տարվելիք նավթամուղի նախագծերին: Անկարան Սեզերի այցով փորձեց տարհանոգել ռուսներին:

* * *

Ռուսաստանն, իր հերթին, գազային փոխադրումների եւ ապրանքաշրջանառության ծավալի աճից բացի, հետաքրքրված է Թուրքիայում միջուկային էլեկտրակայանի շինարարությամբ, ինչպես նաեւ S-300 հրթիռների՝ Թուրքիայում համատեղ արտադրության հեռանկարով: Թուրքիայի միջուկային ծրագրերի շուրջ Ռուսաստանի մեծ հետաքրքրության մասին հայտարարել էր նաեւ երկրի էներգետիկայի նախարար Վիկտոր Խրիստենկոն Ստամբուլում անցկացվող առևտրատնտեսական համագործակցության թուրք-ռուսական միջկառավարական հանձնաժողովի նիստի ժամանակ: Ատոմային էներգետիկայից բացի, ռուսական կողմը ծրագրում է մասնակցել նաեւ հիդրո էլեկտրակայանների շինարարական աշխատանքներին:

Հունիսյան հանդիպման ժամանակ Պուտինը Սեզերին առաջարկեց համագործակցել միջուկային ոլորտում: Նա ընդգծեց, որ պետք է ոչ միայն ձգտել աջակցել ապրանքաշրջանառության աճի միտմանը, այլեւ «կենտրոնացնել ուշադրությունը ներդրումային ծրագրերի շարունակականության վրա եւ ձեռնարկել նորերը»: Պուտինն իր խոսքում նախանշեց ռուս-թուրքական համագործակցության առաջնային ոլորտները՝ դրանց շարքում տեսնելով նաեւ ատոմային էներգետիկան:

Այսպիսով, ռուս-թուրքական հարաբերությունները թեւակոխել են մի փուլ, որը կարելի է անվանել գործընկերային: Ի՞նչ ազդեցություն կունենա թուրք-ռուսական գործընկերությունը հայ-ռուսական հարաբերությունների վրա. այս հարցը հայ հասարակության շրջանակներում բնական մտահոգության տեղիք է տալիս:

ԱՇԽԱՐՀԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Գազիկ Տերտերյան

Նախորդ դարի վերջերին ազգային անվտանգության ոլորտի ամերիկյան փորձագետները շրջանառության մեջ դրեցին «աշխարհատնտեսություն» եզրը՝ դրա տակ նկատի ունենալով աշխարհաքաղաքական նպատակներին տնտեսական միջոցներով հասնելու գաղափարը: Նման մոտեցումն, անշուշտ, նորություն չէր. տնտեսական գործոնի նշանակությունը մշտապես կարելու էր անցյալի բոլոր ստրատեգիաների կողմից, իսկ բրիտանացիները վերջին աշխարհամարտի տարիներին անգամ ստեղծել էին տնտեսական պատերազմի նախարարություն: Սակայն պետք է ընդունել, որ ամերիկացիները կարողացան համակարգել նախկինում եղած պատկերացումները եւ, ինչն ամենազխափորն է, աշխարհատնտեսական մոտեցումները դարձրին, այսպես կոչված, ռեալ քաղաքականության անքակտելի մաս: Միաժամանակ, ռազմավարական խնդիրներ լուծելիս՝ տնտեսական տեխնոլոգիաները լայնորեն կիրառել սկսեցին նաեւ ԱՄՆ մրցակիցները:

Նավթը եւ դոլարը. ԱՄՆ տնտեսական հզորության ամենաշոշափելի արտահայտություններից է դոլարի գերակայությունն այլ տարադրամների հանդեպ: Ինչպես հայտնի է, 2-րդ աշխարհամարտից հետո, 1945թ. Բրեթոն-Վուդում կնքված համաձայնագրերի հիման վրա ամերիկյան դոլարը այլ երկրների կառավարությունների համար դարձավ ոսկով կոնվերտացվող եւ այդպիսով վերածվեց համաշխարհային ռեզերվային արտարժույթի: Սակայն երբ 70-ականների սկզբին որոշ երկրներ պահանջեցին իրենց ունեցած դոլարները վերածել ոսկու (այդ պահին աշխարհում արդեն կուտակվել էին դոլարի զգալի պաշարներ), ապա ամերիկյան կառավարությունը հրաժարվեց դա անել եւ իր պարտավորությունների հանդեպ դեֆոլտ հայտարարեց: Այդպիսով դոլարի նկատմամբ ԱՄՆ-ը որեւէ պարտավորություն չունի, սակայն շնորհիվ ամերիկյան ռազմաքաղաքական գերակայության, դոլարը մնաց որպես համաշխարհային ռեզերվային արտարժույթ:

Դոլարի գերակայությունը, ի թիվս այլ գործոնների, մեծապես պայմանավորված է նրանով, որ ածխաջրածնային վառելիքի հետ կապված գործարքները կատարվում են Նյու Յորքի ապրանքային, Լոնդոնի Միջազգային նավթային (մասամբ նաեւ Սինգապուրի, Տոկիոյի) բորսաներում ու միմիայն դոլարով: Նման պայմանները ստիպում են

նավթ ներկրող երկրներին այդ բորսաներում գործարքներ կատարելու համար կուտակել դոլարային ակտիվներ եւ դրանով իսկ ամրապնդել ԱՄՆ տնտեսությունը: Վերահսկելով գոյություն ունեցող նավթային բորսաները՝ ԱՄՆ-ը ի վիճակի է իրագործել գնային այն քաղաքականությունը, որը համընկնում է իր սեփական շահերին: Համաձայն տնտեսագետ-փորձագետների, այս ամենը հանգեցնում է հետեւյալ իրավիճակի. տարածելով եւ ողջ աշխարհին պարտադրելով օգտագործել ամերիկյան պետության կողմից չապահովված եւ արժեզրկվող դոլարը՝ ԱՄՆ-ը փաստորեն այլ երկրներից ապրանքները գնում է ավելի էժան գնով, քան դրանք իրականում արժեն: Նման երեւույթը երբեմն համեմատում են անուղղակի հարկերի հետ, որոնք ԱՄՆ-ը հավաքում է այլ երկրներից:

Մինչեւ վերջերս վերոհիշյալ կանոնները խախտելու փորձերն անգլո-ամերիկացիները կարողացել են կանխել կոշտ մեթոդներով: Օրինակ, համաձայն մի վարկածի, ԱՄՆ՝ Իրաքի վրա հարձակման պատճառներից է եղել այն, որ Սադամ Հուսեյնը, «Նավթ պարենի դիմաց» ծրագրի սահմաններում, փորձելով խուսափել արժեզրկվող դոլարից, նավթի մի մասը որոշել էր վաճառել ոչ թե դոլարով, այլ եվրոյով (գործարքն արժեցել է մոտ \$10 մլրդ):

Սակայն այսօր տեղի է ունենում ամերիկյան մենատիրության աստիճանական նվազում, որն ընթանում է նաեւ արտարժույթի ոլորտում: Շանհայի համագործակցության կազմակերպության հզորացման, ԱՄՆ ռազմաքաղաքական հայտնի կորուստների եւ հատկապես Իրաքում կրած անհաջողությունների հետեւանքով Ամերիկայի ամենակարողության պատրանքը մասամբ վերացել է: Այսօր նավթի համաշխարհային պաշարների մոտ 10%-ին տիրապետող Իրանը եւ Ռուսաստանը (չնայած այդ երկրում, ընդհանուր առմամբ, գտնվում է աշխարհի օգտակար հանածոների մոտ 30%-ը, սակայն մինչեւ վերջերս դրանց միջազգային գնագոյացման գործում Ռուսաստանը էական դերակատարում չուներ) արդեն իսկ բացել են բորսաներ, որտեղ գործարքները կատարվում են ոչ թե դոլարով, այլ համապատասխանաբար՝ եվրոյով եւ ռուբլով: Վենեսուելայի նախագահ Հուգո Չավեսը, իր հերթին, հայտարարել է, որ իր երկրում նույնպես ստեղծվելու է նավթային բորսա, որտեղ գործարքները կկատարվեն եվրոյով:

«Այլընտրանքային» նավթային բորսաների հայտնվելը նոր երեւույթ է եւ արտացոլում է այն սուր պայքարը, որն ընթանում է ԱՄՆ-ի եւ «մնացյալ աշխարհի» միջեւ: Նշենք նաեւ, որ նավթային խոշոր պաշարներ չունեցող Չինաստանը նույնպես «պայքարում» է դոլարի դեմ. նա իր հսկայական արտարժույթային պաշարների մոտ 45%-ն

արդեն վերածել է եվրոյի, իսկ յուրանի՝ 10%-ը, ինչն էապես նպաստում է դոլարի հեղինակության անկմանը:

Թեհրանի նախաձեռնությունը. Իրանի նավթային բորսան (ԻՆԲ) ենթադրվում էր բացել ազատ առևտրային գոտի հանդիսացող Քեշ կղզում, դեռևս 2002թ., երբ Սերձավոր Արեւելքի նկատմամբ ամերիկյան հարձակողական ծրագրերը դարձան ակնհայտ: Սակայն պատահական չէ, որ ԻՆԲ-ն սկսեց գործարկվել ս.թ. մայիսին, այսինքն՝ Ահմադինեժադի իշխանության օրոք, երբ հակասությունները ԱՄՆ-ի հետ հասան իրենց գագաթնակետին: Այս համատեքստում տեղին է նշել, որ Իրանի միջուկային ծրագրի վերաբերյալ Վիեննայում, այսպես կոչված, «վեցյակի» կողմից ձեւավորված կոմպրոմիսային առաջարկությունները (որոնք, չնայած իրենց գրավչությանը, դեռևս վերջնականորեն չեն ընդունվել Թեհրանի կողմից) վկայում են այն մասին, որ ԱՄՆ-ը ստիպված է ժամանակավորապես դադարեցնել իր հայտնի ծրագրերի իրագործումը եւ հաշտության եզրեր փնտրել գաղափարախոսական թշնամի Իրանի հետ: Նկատենք, որ Վիեննայում կատարվածը, ԱՄՆ-ի կողմից 2005թ. Ուզբեկստանում հրահրված հեղափոխական գարգացումների տապալումից հետո, ամերիկացիների երկրորդ լուրջ նահանջն է (ԽՍՀՄ փլուզումից հետո), ինչը պետք է ընկալել որպես բազմաբեւեռ աշխարհակարգի անցման ռեալ արտահայտություն: Հարկ է նկատել, որ ԱՄՆ նահանջի հիմքում, ի թիվս այլ ռազմավարական գործոնների, ընկած է Իրանի ղեկավարության ամուր քաղաքական կամքը, եւ ԻՆԲ-ի հիմնումը դրա արտահայտություններից է:

Ռուսաստանի նախաձեռնությունը. Դեռևս 2002թ. գարնանը (այսինքն՝ նույն ժամանակային փուլում, երբ հայտնվեցին առաջին տեղեկությունները ԻՆԲ-ի ստեղծման մասին), ՋԼՄ-ում շրջանառության մեջ դրվեցին լուրեր, թե Ռուսաստանը եւ Գերմանիան պատրաստվում են Ֆրանկֆուրտում համատեղ նավթային բորսա բացել: Խոսվում էր նաեւ այն մասին, որ ռուսաստանյան քաղաքներից մեկում հիմնվելու է այդ բորսայի մասնաճյուղը: Ծրագիրը բավական մտածված էր, քանի որ պետք է համատեղվեին գերմանացիների կապիտալը եւ գործարար ունակություններն ու ռուսաստանյան բնական ռեսուրսները: Այդ նախագիծը, ըստ ամենայնի, արդյունք էր անթաքույց գերմանական կողմնորոշում ունեցող Պուտինի եւ Շրյոդերի համագործակցության: Այդ երկու գործիչներին միավորում էին հակաամերիկանիզմը, Մոսկվա-Բեռլին աշխարհաքաղաքական առանցք ձեւավորելու նպատակաուղղվածությունն ու էներգետիկ գործոնի կարեւորության ըմբռնումը: Նման մոտեցումների ամենավառ արտահայտությունը

Բալթիկայի տակով անցնող գազամուղի նախագիծն է, որն, ի դեպ, շարունակաբար քննադատության է ենթարկվում պրոատլանտյան ուժերի (հիմնականում Արևելյան Եվրոպայի երկրների ղեկավարությունների) կողմից: Սակայն անգլո-ամերիկացիներին հաջողվեց քաղաքական եւ տնտեսական ճնշումների միջոցով տապալել Շրյոդերի կաբինետը եւ Գերմանիայում իշխանության բերել հյուսիսատլանտյան կողմնորոշում ունեցող քրիստոնեա-դեմոկրատ Անգելա Մերկելին: Վերջինս պարտավորված է շարունակել արդեն ավանդական դարձած ռուս-գերմանական ծրագրերը տնտեսական եւ հատկապես էներգետիկ ոլորտում, սակայն թվում է, թե այդ համագործակցությունը մոտ ապագայում չի հասնի այն բարձր մակարդակին, ինչը գոյություն ուներ Շրյոդերի օրոք:

Ռուսական նավթային բորսայի վերաբերյալ քննարկումները վերսկսվեցին միայն 2005-ին: Մասնավորապես՝ այդ թեման շոշափվում էր այն դժգոհությունների առիթով, որ, այսպես կոչված, *Սիբերյան լայթ* մակնիշի ռուսական հում նավթի բարելը Լոնդոնում եւ Նյու Յորքում \$6-8 ավելի էժան է վաճառվում, քան նույն որակի ամերիկյան նավթինը:

Վերջերս ռուսաստանյան կառավարության որոշմամբ Մոսկվայում բացվեց եւ սկսեց գործել նավթային բորսա: Այն ավելի լայն նպատակներ է հետապնդում, քան ԻՆԲ-ն. մոսկովյան բորսայում գործարքներ են կատարվում ոչ միայն նավթի, այլեւ ոսկու հետ կապված: Թվում է, թե մոտ ապագայում այնտեղ կսկսեն վաճառել նաեւ այլ հանածոներ (առաջին հերթին՝ միկել, քրոմ եւ գուլցե անգամ ադամանդներ, որոնց պաշարները մեծ են), եւ այդպիսով Ռուսաստանը, առաջին անգամ վերջին հարյուրամյակում, կփորձի անմիջականորեն մասնակցել իր բնական հարստությունների իրացմանը:

Մոսկովյան բորսայի գործարքների ծավալները դեռեւս մեծ չեն, եւ խոշոր նավթային ընկերությունները դրանց առայժմ չեն մասնակցում: Սակայն պետք է հաշվի առնել, որ Ռուսաստանի հումքային գրեթե բոլոր խոշոր ընկերություններն այսօր անցնում են Պոլտինի թիմի վերահսկողության տակ: Իր հերթին, Եվրոպական ներկրողների համար Եվրոյի կոնվերտացիան ռուբլու ձեռնտու պետք է լինի: Այսինքն՝ կարելի է սպասել, որ մոսկովյան բորսան մոտ ապագայում թափ կհավաքի:

Նավթային բորսայի բացումը համընկավ ռուբլին կոնվերտացվող տարադրամի վերածելու որոշման հետ (այդ կապակցությամբ փոխվարչապետ Դ.Մեդվեդեւն անգամ հայտարարեց, որ ռուբլին կարող է դառնալ ռեզերվային տարադրամ, ինչպես դոլարը): Նշենք նաեւ, որ 2005-ին առաջին անգամ կապիտալի ներհոսքը դեպի այդ երկիր գերազանցում է արտահոսքին:

Անգլո-ամերիկյան նախաձեռնությունները. Վերոհիշյալ տնտեսական մարտահրավերներին անգլո-ամերիկացիները փորձում են համարժեք պատասխաններ փնտրել:

Եվրոպայի այս տարվա ամենամշանակալի տնտեսական իրադարձություններից էր Ամստերդամի, Բրյուսելի եւ Փարիզի բորսաների միաձուլումը, որի արդյունքում ստեղծվեց «Եվրոնեկստ» անունը կրող առաջին եվրոպական միացյալ բորսան: Այդ բորսան կատարվող գործարքների ծավալով եւ քանակով գրավեց աշխարհում 3-րդ հորիզոնականը (առաջին տեղը գրավում է Նյու Յորքի բորսան, իսկ երկրորդը՝ Լոնդոնի): Հետագայում «Եվրոնեկստ»-ին միացավ նաեւ Լիսաբոնի բորսան: Թվում է, թե եվրոպական այդ բորսաների միաձուլումն անգլո-ամերիկյան եւ հրեական կապիտալի նախապես հաշվարկված քայլ էր, քանի որ միավորմանը շատ արագ հետեւեց Նյու Յորքի բորսայի առաջարկությունը՝ «Եվրոնեկստ»-ին միաձուլվելու վերաբերյալ: Հատկանշական է, որ «Եվրոնեկստ»-ը համաձայնություն է տվել ամերիկյան առաջարկին, մինչդեռ մերժել է Ֆրանկֆուրտի բորսայի համանման առաջարկը: Ավելին. վերջերս ֆրանկֆուրտյան բորսան մի նոր, նախկինից շատ ավելի ձեռնտու առաջարկություն ներկայացրեց «Եվրոնեկստ»-ին, սակայն նորից մերժում ստացավ: Այսպիսով, տպավորություն է ստեղծվում, թե ԱՄՆ-ը փորձում է իր վերահսկողության տակ առնել եվրոպական բորսային գործարքները, որով եւ արգելակել իր համար անցանկալի տնտեսական զարգացումները, որոնց հատկապես հակված են գերմանացի ձեռնարկատերերը:

Հետևություններ. Դիտարկված զարգացումները լրացուցիչ վկայում են այն մասին, որ տնտեսական մրցակցային դաշտում ԱՄՆ-ը աստիճանաբար զիջում է միանձնյա առաջատարի դիրքերը: Միեւնույն ժամանակ, ըստ տնտեսագետ-փորձագետների, դոլարային համակարգի փլուզումը էական ցնցումներ կառաջացնի համաաշխարհային տնտեսությունում եւ կհանգեցնի գլոբալ տնտեսական ճգնաժամի: Թերեւս, դա է պատճառը, որ ԱՄՆ մրցակից տերություններն այդ ոլորտում փորձում են գործել հաշվենկատ: Մինչդեռ, միաբեւեռից բազմաբեւեռ աշխարհակարգի անցման ներկայիս պայմաններում տնտեսական գլոբալ գործընթացների վերահսկումը միշտ չէ, որ հնարավոր է: Ելնելով դրանից՝ այն երկրները, որոնք էական դերակատարում չունեն ԱՄՆ-մնացյալ աշխարհ տնտեսական մրցակցությունում, պետք է փորձեն դիվերսիֆիկացնել իրենց արտարժութային ակտիվները՝ հիմնական շեշտը դնելով նյութական ռեսուրսների (թանկարժեք մետաղներ, քարեր եւ այլն) կուտակման վրա:

**ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՍՊԻՑԻ ԷՆԵՐԳԱԿԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ
ՍԵՆԱԿ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ**

Այս տարվա հունիսին Ղազախստանը համաձայնեց միանալ Բաքու–Ջեյհան գծով նավթի արտահանման ծրագրերին: Դրան հետեւեցին թուրքմենական նոր մոտեցումները Ռուսաստանին վաճառվող գազի գների վերաբերյալ:

Ղազախստան եւ Բաքու – Ջեյհան

Միջազգային փորձագետներն ի սկզբանե հայտարարում էին, որ Բաքու–Ջեյհանը տնտեսական գործոն դարձնելու նպատակով անհրաժեշտ է, որ նավթամուղով թուրքական Ջեյհան նավահանգիստ արտահանվի ղազախական նավթը: Ի տարբերություն Ադրբեյջանի՝ նավթի արտադրությունը Ղազախստանում աճում է սրընթաց տեմպերով: Միայն անցած տարի Ղազախստանում այն կազմել է ավելի քան 60 միլիոն տոննա: Ըստ «ՂազՄունայԳազ» ընկերության տվյալների՝ տասը տարի հետո այս ցուցանիշը կարող է հասնել 150 միլիոնի: Վերը նշված թվերը խոսում են այն մասին, որ Ղազախստանն աստիճանաբար վերածվում է էներգակիրների շուկայում գլոբալ խաղացողի:

Ղազախստանի միացումը Բաքու–Ջեյհանին, իհարկե, անակնկալ չէր: Որ Ղազախստանը կմիանա նավթամուղին, պարզ էր բոլոր այն փորձագետների համար, ովքեր զբաղվում էին ղազախական նավթի արտահանման ռազմավարության ուսումնասիրությամբ: Այդ ռազմավարությունը պայմանականորեն կարելի է անվանել «նավթային կոմպլիմենտարիզմ», որի հիմնական սկզբունքն է՝ բոլոր գլոբալ ուժերի քաղաքական եւ տնտեսական նշանակություն ունեցող նավթային շահերի իրագործմանը մասնակի աջակցություն, ինչն, իր հերթին, կարող է ապահովել Ղազախստանի քաղաքական եւ տնտեսական շահերի պաշտպանությունը:

Բաքու–Ջեյհանն, այս տեսանկյունից, այն հիմնական արեւմտյան էներգետիկ գործոնն է, որը Ղազախստանի ղեկավարությունն անտեսել չի կարող: Արդեն իսկ գոյություն ունեցող նավթամուղերը դեպի Ռուսաստան եւ Չինաստան, ավելացրած Բաքու–Ջեյհանը, կազմում են

այն աշխարհաքաղաքական եւ աշխարհատնտեսական էներգետիկ եռանկյունին, որի հետ հաշվի նստելով էլ զարգանում է Ղազախստանը:

Հարկ է նշել, սակայն, որ այս տեսակ խաղի արդյունավետությունը կարող է ժամանակավոր լինել Ղազախստանի համար: Դա կապված է, առաջին հերթին, Շանհայի համագործակցության կազմակերպության (ՇՀԿ) հետագա հզորացման հետ: Այս կազմակերպության անդամ Ղազախստանի էներգետիկ կոմպլիմենտարիզմը կարող է մոտ հեռանկարում անհամաձայնության մեջ մտնել, առաջին հերթին, Չինաստանի տնտեսական եւ քաղաքական շահերի հետ: Չինաստանի՝ Կասպիցի էներգակիրների շուկայում սեփական դիրքերի ամրապնդման քաղաքականությունը վաղ թե ուշ կստիպի այս գերտերությանն ավելի լայն հակամարտության մեջ մտնել ԱՄՆ-ի հետ, որն իր հերթին խստորեն շահագրգռված է Ղազախստանի նավթի վերահսկմամբ: Այսինքն՝ վաղ թե ուշ Ղազախստանը ստիպված կլինի ավելի հստակ կողմնորոշվել սեփական նավթային քաղաքական գիծն իրագործելիս:

Հարկ է նաեւ նշել, որ նույն ՇՀԿ-ն կարող է զարգանալ եւ վերափոխվել այնպես, որ ստիպի Ղազախստանին սահմանափակել իր մասնակցությունը կազմակերպության աշխատանքներում: Խոսքն այս դեպքում այն մասին է, որ հեռանկարում ՇՀԿ կարող են ընդունվել պետություններ, որոնց ռազմաքաղաքական եւ տնտեսական պոտենցիալը կարող է սահմանափակել Ղազախստանի գործուն դերը կազմակերպությունում: Սա վերաբերում է հիմնականում երեք պետությունների. դրանք են՝ Յուկրաինան, Պակիստանը եւ Իրանը: ՇՀԿ վերջին գազաթափողովին հենց Ղազախստանը հանդես եկավ ՇՀԿ հետագա ընդլայնման դեմ, առաջին հերթին Իրանի անդամակցության կտրվածքով: Ռուսական լրատվական եւ վերլուծական շրջանակներում հայտարարվեց, որ Ղազախստանի վրա Իրանին մերժելու պարտավորությունը դրվել էր Ռուսաստանի եւ Չինաստանի կողմից: Դա, իհարկե, այդպես է: Սակայն ակնհայտ է, որ Ղազախստանի այս դիրքորոշումը պայմանավորված է նաեւ հենց Ղազախստանի եւ, ինչու ոչ, ԱՄՆ շահերով:

Վերջերս այցելելով Ղազախստան՝ ԱՄՆ փոխնախագահ Դ.Չեյնին հիացական կարծիքներ արտահայտեց Ղազախստանի տնտեսական եւ քաղաքական բարեփոխումների մասին: Ակնհայտ է, որ այցի շրջանակներում քննարկման հիմնական հարցերից մեկը եղել է Բաքու-Ջեյհանին Ղազախստանի միացման խնդիրը: Բայց ոչ միայն դա: Դ.Չեյնիի այցից հետո Ղազախստանում ծավալվեց «անկախ» լրատվամիջոցների վերացման ակտիվ քաղաքականություն: Հունիսին այդ

քաղաքականության գոհ գնացին մի քանի թերթեր՝ հիմնականում ամերիկյան եւ ռուսական ֆինանսներից սնվող: Այն, որ ամերիկյան կողմը ոչ մի կերպ չի արձագանքում Նազարբաեւի այս քաղաքականությանը, կարող է անուղղակիորեն խոսել այն մասին, որ ԱՄՆ-ի կողմից Ղազախստանին տրվել է գործողությունների որոշակի «ազատություն»: Կասկածելի է, որ այն տրվել է միայն Ղազախստանի՝ Բաքու – Ջեյհանին միանալու պայմանով: Բացառված չէ, որ ձեռք են բերվել տարածաշրջանային եւ ՇՀԿ գործունեության շուրջ ամերիկա-ղազախական որոշակի պայմանավորվածություններ:

Այս առումով, մեծ նշանակություն ունի նաեւ Թուրքմենստանի գազային քաղաքականության էվոլյուցիան, որը, թերեւս, լավ մշակված եւ հետեւողականորեն իրագործվող ընդհանուր քաղաքական կուրսի անքակտելի մասն է:

Թուրքմենստան – Ռուսաստան

Թուրքմենական ղեկավարի որոշումը՝ վերանայել գնային քաղաքականությունը «Գազպրոմի» հետ, սպասելի էր: Ակնհայտ է, որ ռուս-ուկրաինական գազային պատերազմը չէր կարող վրիպել նախագահ Նիյազովի ուշադրությունից: Պարզ է նաեւ, որ նրան չէր կարող չանհանգստացնել այն փաստը, որ թուրքմենական գազն այսօր «Գազպրոմի» կողմից գնվում է չնչին՝ 50 դոլարով:

Սակայն գնային քաղաքականության վերանայման որոշումը նախապես Թուրքմենստանից պահանջեց մի քանի առաջնային հարցերի լուծում Ռուսաստանի հետ հարաբերություններում: Կարելորագույն հարցն այստեղ երկքաղաքացիության խնդիրն էր: Այս խնդիրը Թուրքմենստանի ղեկավարության կողմից կապվեց գազային համաձայնագրի կնքման հետ եւ սկզբունքորեն ձեւակերպվեց հետեւյալ կերպ. Ռուսաստանը հրաժարվում է ռուս-թուրքմենական երկքաղաքացիության մասին համաձայնագրից, եւ «Գազպրոմը» ստանում է թուրքմենական գազի գնման եւ վերավաճառման լրացուցիչ հնարավորություններ: Միեւնույն ժամանակ, Ռուսաստանը պետք է «փակեր աչքերը» երկքաղաքացիների հիմնախնդիրների լուծման՝ Թուրքմենստանի քաղաքականության նկատմամբ: Ռուսաստանը, ընդհանուր առմամբ, ընդունեց թուրքմենական պահանջները, ինչի արդյունքում՝

❖ «Գազպրոմը» ստացավ այն համաձայնագիրը, որն ուզում էր ստանալ Թուրքմենստանից,

❖ Թուրքմենստանի մեծ թվով քաղաքացիներ՝ ռուսներ եւ այլ ազգերի ներկայացուցիչներ, սպիպված եղան հրաժարվել ռուսական անձնագրերից, քանի որ դրանց առկայությունը բարդացնում էր նրանց գոյությունն այդ երկրում:

❖ Կենսաթոշակային ռեֆորմի արդյունքում հազարավոր նախկին ռուսաստանցիներ՝ Թուրքմենստանի քաղաքացիներ, զրկվեցին գոյատևման վերջին միջոցներից եւ մատնվեցին չքավորության:

Ինչպես տեսնում ենք, հետեւանքներից միայն առաջինը դրական արդյունք ունեցավ Ռուսաստանի համար, այն էլ՝ կարճաժամկետ: Այսօր թուրքմենական ղեկավարությունն աստիճանաբար սկսել է զրկել Ռուսաստանին այս առավելությունից եւս՝ ի ցույց հանելով ռուսական «ինչը լավ է «Գազպրոմի» համար, լավ է Ռուսաստանի համար» քաղաքականության անկատարությունը: Գազի գների մասնակի բարձրացումը Թուրքմենստանի՝ ռուսական ազդեցությունից ձերբազատման եւ տարածաշրջանում Ռուսաստանի վտարման հետեւողական քաղաքականության մասն է կազմում: 2010 թվականին, երբ գազի արտադրությունը Թուրքմենստանում կհասնի 100 մլրդ խմ-ի, այս երկիրը, հավանաբար, կլինի ավելի ազատ գազային խաղացող, քան այսօր է: Թուրքմենական հեռանկարները, սակայն, կապված են մի շարք հնարավոր աշխարհաքաղաքական եւ աշխարհատնտեսական տեղաշարժերի հետ, որոնցից առավել տեսանելի են երկուսն են:

Իրանի ապաշրջափակում. Ակնհայտ է, որ այսօր կա իրանա-արեւմտյան հարաբերությունների լավացման հնարավորություն, որը կիրականանա միջուկային ծրագրի շուրջ պայմանավորվածությունների ձեռքբերման դեպքում: Այն, որ հարաբերությունների լավացումը կբերի Իրան – ԵՄ էներգետիկ երկխոսության հաստատմանը, ակնհայտ է: Դա է ենթադրում նաեւ Իրանին ներկայացված առաջարկությունների փաթեթը: Սակայն իրանական գազի հեռանկարներից կախված է նաեւ թուրքմենական գազի հեռանկարը: Կարելի է ասել, որ եթե տեղի ունենա իրանական գազի Եվրոպա արտահանման ծրագրերի իրագործում, ապա հնարավորություն կստեղծվի, որ թուրքմենական գազը դուրս գա Եվրոպական շուկա իրանական եւ թուրքական եւ/կամ հարավ-կովկասյան հեռանկարային գազատարների միջոցով:

Գազամուղ դեպի Պակիստան եւ Չնդկաստան. Իրանական հարցի թե՛ քաղաքական-խաղաղ, թե՛ ռազմական լուծման հետաձգումը կարագացնի ամերիկյան քայլերը՝ ուղղված թուրքմենական գազի

Պակիստան եւ Յնդկաստան հնարավոր արտահանմանը: Այս նախագծի իրագործումը, որ, թերեւս, կոչված է խոչընդոտելու Իրան – Պակիստան – Յնդկաստան գազատարի կառուցմանը, հնարավորություն կտա Թուրքմենստանին շրջանցել Ռուսաստանը համաշխարհային գազի շուկա դուրս գալու ճանապարհին:

Այսօր քննարկվում է նաեւ դեպի Չինաստան Թուրքմենստանից գազատար կառուցելու հեռանկարը, սակայն դրա իրագործումը մոտակա տարիներին կասկածելի է թվում: Ներկայումս Չինաստանի քայլերն ուղղված են ռուսական եւ դազախական գազի ստացմանը:

Այսպիսով, Ռուսաստանի ռազմաքաղաքական դիրքերի մասնակի ամրապնդումը Կենտրոնական Ասիայում եւ Կասպիցի շրջանում ուղեկցվում է այս տարածաշրջանում նրա էներգետիկ եւ տարանցիկ հատուկ դերի կորստով, որն արդյունք է՝

- ❖ բուն ռուսական քաղաքականության թերացումների,
- ❖ ամերիկյան դեռեւս նշանակալի ազդեցության եւ էներգետիկ ծրագրերի իրագործման,
- ❖ տարածաշրջանային պետությունների հավասարակշիռ կամ ուղղակի հաջող քաղաքականության:

Միեւնույն ժամանակ, սեփական էներգետիկ դիրքերի ամրապնդման անհրաժեշտությունն օբյեկտիվորեն պետք է ստիպի Ռուսաստանին ակտիվացնել իր քաղաքականությունն իրանական զարգացումներում՝ ոչ միայն միջուկային, այլ նաեւ էներգետիկ ուղղություններով:

ԵՎՐՈՊԱՅԻ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ
ԵՎ ԱՆԿԱԽԱՑՈՒՄՆԵՐԻ ՆՈՐ ԱԼԻՔԸ
Սուրեն Սարյան

Եվրոպայում, կարծես, սկսվում է անկախացումների երկրորդ ալիքը, որը հաջորդում է Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի երկրների անկախացմանը՝ Խորհրդային Միության, հարավսլավական եւ չեխոսլովակյան դաշնությունների փլուզումից հետո:

Անկախացման երկրորդ ալիքի սկիզբ կարելի է համարել 1990-ականներին Կոսովոյի իրադարձությունները, երբ Սերբիայի կազմում գտնվող Կոսովոյի ինքնավար երկրամասը ՆԱՏՕ-ի ռազմական ուժի աջակցությամբ ձեռք բերեց փաստացի անկախություն Բելգրադից: Ալբանացիները, լինելով Եվրոպայի ամենահին ազգերից մեկը, չունենալով իրենց շրջապատող ժողովուրդների հետ էթնիկ որեւէ կապ, անկախության համար պայքարի ելան Սերբիայում, ապա Մակեդոնիայում եւ արդյունքում կարողացան հասնել Կոսովոյի վրա միջազգային պրոտեկտորատի հաստատմանը, ինչն ի վերջո պիտի հանգեցնի երկրամասի անկախացմանը, իսկ Մակեդոնիայում՝ իրենց իրավահավասարության ճանաչմանը միջազգային երաշխիքներով:

Ապա հերթը հասավ Մոնթենեգրոյին (Չեռնոգորիա), որը միակ նախկին հարավսլավական հանրապետությունն էր, որ 1991 թվականից հետո չգնաց Սերբիայի հետ ապահարզանի եւ կազմավորեց նրա հետ ընդհանուր պետություն՝ Հարավսլավիայի Միութենական Հանրապետություն: Դեռեւս 2000 թվականին, երբ ընկավ Սլոբոդան Միլոշեւիչի վարչակարգը, Մոնթենեգրոն դե ֆակտո դարձավ անկախ (արդեն այդ ժամանակ հանրապետության տարածքում պաշտոնական արժույթ էր դարձել եվրոն):

Այն պահից, երբ 2003-ին ՀԱՅ-ը փոխակերպվեց Սերբիայի եւ Չեռնոգորիայի ընկերակցության, Մոնթենեգրոյի անկախացումը կանխորոշված էր, քանի որ նա դարձավ փաստացի սուվերեն պետություն, որտեղ զուտ ձեւականորեն էին գործում ընկերակցության օրենքները: Այդ ժամանակ որոշվեց նաեւ, որ երեք տարի անց պետք է անցկացվի Չեռնոգորիայի հետագա կարգավիճակի մասին հանրաքվե, որը եւ կայացավ այս տարվա մայիսին:

Ստանալով անհրաժեշտ դրական արդյունք՝ Մոնթենեգրոյի

մայրաքաղաք Պողոստանում հունիսին հռչակվեց Եվրոպայի նոր՝ թվով 48-րդ անկախ պետությունը: Դարեր շարունակ Մոնթենեգրոն եղել է Բալկաններում միակ ինքնիշխան պետությունը, որի ասպետական-վանական եղբայրությունները թույլ չէին տալիս օսմանների կայսրությանը եւ Վենետիկին հաստատել իրենց վերահսկողությունը այս տարածքի նկատմամբ: Եվ հիմա այն դարձավ վերջինը, որ անկախություն նվաճեց Յարավսլավիայի փլատակների վրա:

Մոնթենեգրոյի եւ Կոսովոյի անկախացումը կարելի է համարել Յարավսլավիայի գերեզմանին դրված վերջին քարը: Բալկանյան պատերազմների եւ հարավսլավական միասնության փլուզման հետեւանքով վերացավ Եվրոպայում առավել դինամիկ տնտեսություն, լավ բանակ եւ ռազմարդյունաբերական համալիր ունեցող քաղաքական կենտրոններից մեկը: Հասկանալի է, որ ԵՄ-ին, առավել եւս նրա առանցքային դերակատար Գերմանիային, որն արդեն հարյուր տարուց ավելի Բալկանները դիտում է որպես իր հարավային ազդեցության շարունակություն եւ ելք դեպի Միջերկրական ծով ու Մերձավոր Արեւելք, առանձնապես պետք չէր իր կողքին ունենալ հավասարազոր ներուժով մրցակից երկիր: Պատահական չէ, որ հենց Գերմանիան առաջինը զարկ տվեց տիտոյական Յարավսլավիայի քայքայմանը, երբ ԱՄՆ-ից, Մեծ Բրիտանիայից եւ Ֆրանսիայից առաջ ընկնելով՝ ճանաչեց Սլովենիայի եւ Խորվաթիայի անկախությունը, ապա գործուն մասնակցություն ունեցավ բոսնիական եւ կոսովյան պատերազմներին, իսկ այսօր տնտեսական ներխուժում է իրականացնում Բալկաններում:

Միացյալ Նահանգները՝ մարտավարության տեսանկյունից դառնալով Բալկաններում «իրերի որոշողը», ռազմավարական առումով այսօր դուրս է մղվում այս տարածաշրջանից: Իսկ Ռուսաստանի գործոնը, որին շատ են հիշատակում Բալկանների մասին խոսելիս՝ որպես իբրեւ թե սերբերի իրական եւ միակ դաշնակից, այսօր գրեթե հավասարվել է զրոյի, մինչդեռ ընդամենը հարյուր տարի առաջ հենց Բալկանների համար էր ռուսական պետությունն անընդհատ պատերազմներ մղում կենտրոնաեվրոպական տերությունների եւ Օսմանյան կայսրության դեմ: Այսօր Եվրոպան՝ ԱՄՆ-ի հետ միասին (կարելի է անգամ ասել՝ նրա միջոցով) Ռուսաստանին լրիվ դուրս է մղել տարածաշրջանից:

Մյուս կողմից, պետք է նկատի ունենալ, որ Յարավսլավիան, իրոք, չափազանց արհեստական պետություն էր, որը ձեւավորվել էր Առաջին աշխարհամարտի արդյունքների հիման վրա: Այդ պետության մեջ միավորվել էին այնքան խայտաբղետ տարածքներ, որոնց միասին պահում էր շատ քիչ բան, եւ ի վերջո այդ կաթսան պետք է պայթեր, ինչը

տեղի ունեցավ 90-ականների սկզբին: Ինչքան էլ Սերբիայի առաջնորդ Սլոբոդան Միլոշեվիչը փորձեց պահպանել Չարավսլավիան, այդ փորձերը միայն մեծ կորուստներ եւ տառապանքներ պատճառեցին բալկանյան ժողովուրդներին, իսկ իրեն՝ Միլոշեվիչին, հասցրին Չապալյա դատարան եւ մահվան: Իսկ այսօր, երբ Միլոշեվիչի վարչակարգն արդեն վեց տարի ոչ եւս է, Մոնթենեգրոն կարողացավ ապահարգանի հասնել Սերբիայի հետ: Այստեղ ավելի շուտ գործեց Չեխիայի եւ Սլովակիայի միջեւ «թավշյա» ապահարգանի նախադեպը, երբ 1992-ին երկու ժողովուրդները որոշեցին ինքնուրույն ապրել եւ առանց լուրջ դիմակայության բաժանվեցին իրարից: Սա վկայում է, որ Բալկանները, որոնք վերջին երկու հարյուրամյակում համարվել են Եվրոպայի «վառճակ տակառ», աստիճանաբար սովորում են Եվրոպական նոր խաղի կանոններին:

Մոնթենեգրոյի անկախացումը վերջնականապես թաղեց պանսլավոնականության միջը եւ միաժամանակ ապացուցեց Եվրոպական միասնության գաղափարի գրավչությունը, քանի որ անկախության հռչակումն ուղղված էր նախ եւ առաջ հենց միջազգային մեկուսացումից դուրս գալուն եւ Եվրամիությանը միանալուն, մինչդեռ Սերբիայի հետ միասին Պոդգորիցան դեռ երկար պետք է սպասեր այդ որոշմանը:

Միաժամանակ, այսօր նմանատիպ գործընթացներ՝ մի փոքր այլ երանգներով, տեղի են ունենում Եվրոպայի արեւմտյան մասում: Իսպանական Կատալոնիայում հունիսին կայացավ ինքնավարության ընդլայնման հանրաքվե, որը բերեց Ֆրանկոյի իշխանության տարիների ճնշման տակ գտնվող կատալոնցիների ազգային ինքնության ճանաչմանը: Դրա հետ մեկտեղ, իսպանական կառավարության եւ տարանջատման ձգտող բասկերի միջեւ նախաձեռնվել են բանակցություններ, իսկ Յու. Իռլանդիայում երկարատեւ դադարից հետո գումարվեց ազգային ասամբլեան:

Փորձագետները պնդում են, որ Մոնթենեգրոյի եւ Կատալոնիայի հանրաքվեները եւ դրանց հետ կապված զարգացումներն իրենց էական ազդեցությունը կունենան անկախության ձգտող բազմաթիվ տարածքների եւ շարժումների վրա՝ զարկ տալով Եվրոպայում (կամ նրա հարեւանությամբ) նոր պետությունների առաջացմանը, որոնց շարքը բավական երկար է. Բասկերի երկիր, նույն Կատալոնիան, Շոտլանդիա, Յու. Իռլանդիա, Կորսիկա, Կոսովո, Մերձդնեստր, Լեռնային Ղարաբաղ, Աբխազիա, Յվ. Օսիա, Յու. Կիպրոս եւն:

Միջազգային հանրությանը մտահոգում է, որ իրար հետեւից ասպարեզ կարող են գալ անկենսունակ փոքր պետություններ, որոնք

կքայքայեն ներկայիս աշխարհակարգը, եւ արդյունքում Եվրոպան կզլորվի դեպի անկայունության նոր փուլ: Սակայն երբեմն հանուն այդ նույն կայունության պետք է գնալ ապահարզանի, քանի որ բռնի կերպով այլ ժողովրդի հետ «միասնության» մեջ մնալը բերում է միայն ավելի ծանր հետեւանքների:

Միաժամանակ, ակնկալել, որ, օրինակ, Մոնթենեգրոյի անկախացումը կարող է ազդել մնացած «վիճելի տարածքների» հիմնախնդիրների կարգավորման վրա, այնքան էլ ճիշտ չի լինի: Մոնթենեգրոյի անկախացման գործընթացն առավել հստակ էր եւ, թերեւս, մշակված: Դեռեւս 2003 թվականին ԵՄ հովանավորությամբ որոշում ընդունվեց եռամյա ժամկետ տալ Սերբիայի եւ Չեռնոգորիայի բաժանման համար, որը պետք է հաստատվեր հանրաքվեով: Սերբիան, իր հերթին, համաձայնեց ընդունել հանրաքվեի ցանկացած արդյունք եւ պարտավորվեց ճանաչել Մոնթենեգրոյի անկախությունը:

Վերջին հաշվով, Մոնթենեգրոն վիճելի տարածք չէր, այն արդեն ուներ պետականության համարյա բոլոր նշանները՝ Յարալսլավիայի, ապա Սերբիայի հետ դաշնության կազմում: Այսօր այն գնաց անկախացման՝ որպես հիմնական շարժառիթ ունենալով ԵՄ-ին միանալու եւ եվրոպական ինտեգրմանը լիակատար մասնակից դառնալու մղումները, ինչպես այսօր դա տեղի է ունենում այլ բալկանյան երկրների՝ Ռումինիայի, Բուլղարիայի կամ Խորվաթիայի հետ: Առավել եւս, որ Մոնթենեգրոյի միացումը ԵՄ-ին որեւէ լուրջ խնդիրներ Միության համար չի հարուցելու, քանի որ այս երկիրն այնքան էլ մեծ չէ, եւ նրա քաղաքական ու տնտեսական ադապտացումը եվրոպական չափանիշներին կընթանա շատ արագ: Օգնությունն էլ, որն անհրաժեշտ է տրամադրել նորանկախ երկրին, եւս ծանր բեռ չի դառնա Եվրոպայի համար, ինչպես, օրինակ, դա կարող է լինել Լեհաստանի, Թուրքիայի կամ Ուկրաինայի դեպքերում:

Որպես «նախադեպ» ավելի շատ կարող է ծառայել Կոսովոյի դեպքը, եթե վերջինիս անկախությունը ճանաչվի առանց նրա նախկին կենտրոնական կառավարության՝ Բելգրադի համաձայնության: Մինչ օրս Սերբիան չի ցանկանում տեսնել այս երկրամասը որպես անկախ պետություն, իսկ Կոսովոյի ալբանացիները պատրաստ են արյամբ նվաճել իրենց անկախ կարգավիճակը:

Կոսովոյի համար ընտրված է այլ՝ յուրօրինակ ուղի: Սկզբից այն պետք է հասնի ոչ լրիվ ինքնիշխանության կարգավիճակի, որտեղ որոշակի գործառույթներ, օրինակ՝ մարդու եւ ազգային փոքրամասնությունների իրավունքների ապահովումը, կվերապահվեն միջազ-

գային հանրությանը: Հայտնի է նաև, որ Կոսովոյի անկախությունը պայմանավորվում է Ալբանիային նրա չմիանալու նախապայմանով: Միաժամանակ Կոսովոյում պահպանվելու են ՆԱՏՕ-ի խաղաղապահ ուժերը, որոնք թույլ չեն տա կոսովցիներին վարել ավելի հարձակողական քաղաքականություն: Այս պետք է սկսվեն ԵՄ-ին Կոսովոյի միանալու մասին բանակցություններ, եւ ի վերջո Կոսովոն, Սերբիան եւ մնացյալ նախկին հարավսլավական հանրապետությունները կդառնան «ընդհանուր ինքնիշխանության» կրողներ՝ միավորվելով ԵՄ-ի մեջ, ինչպես դա տեղի ունեցավ Չեխիայի եւ Սլովակիայի դեպքում:

Սոնթենեգրոյի եւ Կատալոնիայի փորձը ցույց է տալիս, որ ինքնորոշման եւ նրա ձեւերի փոփոխման պրոբլեմները հնարավոր է լուծել խաղաղ ճանապարհով, եթե մյուս կողմը (տվյալ դեպքում՝ Բելգրադն ու Մադրիդը) համարժեք է արձագանքում եւ ընդունում դիմացինի ընտրությունը:

Սոնթենեգրոյի եւ Կատալոնիայի դեպքում մենք վկա ենք դառնում երկու հայեցակարգերի՝ պետությունների Եվրոպայի եւ ռեգիոնների Եվրոպայի միաժամանակյա հակադրմանը եւ համադրմանը: Ռեգիոնները ձգտում են հետզհետե ավելի մեծացնել իրենց գործառնությունները՝ խլելով դրանք կենտրոնական իշխանությունից եւ հարաբերվել ԵՄ-ի հետ ուղղակիորեն: Այսինքն՝ այսօր առկա է խնդիր, թե ինչքանով արդի Եվրոպական պետություններն ունակ կլինեն դիմագրավել ազգային ինքնագիտակցություն ունեցող ժողովուրդների ինքնիշխանության ընդլայնման մարտահրավերին, արդյոք այդ գործընթացը կբերի Եվրոպական պետությունների քայքայմանը, թե՞ ամրապնդմանը:

Սոնթենեգրոյի եւ ամբողջ Բալկանների, ինչպես նաև Կատալոնիայի, Բասկերի երկրի կամ Շոտլանդիայի դեպքերը կոչված են ցույց տալու, թե, քաղաքական իմաստով, ինչի պետք է ծառայի Եվրոպական Միությունը: Այսինքն՝ ինչքանով այն կարող է ծառայել «տանիք», որը պաշտպանում է ինչպես մայրցամաքի ազգային բազմազանությունը, այնպես էլ նրա պետությունների միասնականությունը:

Փորձը ցույց է տալիս, որ տարբեր ազգություններով բնակեցված տարածաշրջանների առկայության դեպքում՝ չափազանց մեծ կենտրոնացումը բերում է կենտրոնական իշխանությանը դիմադրության ուժեղացմանը: Առավել եւս, որ տվյալ դեպքում այդ իշխանությունն այլեւս միակը չէ եւ կարելի է նրա գլխից վերել դիմել Բոյոսելին:

Կատալոնիան առաջարկել է մոտեցում՝ ազգային ինքնություն, հարկային-մաքսային ինքնուրույնություն, բայց՝ Իսպանիայի կազմում: Դրան այսօր ձգտում են նաև Շոտլանդիան, Ուելսը, Հս. Իռլանդիան:

Իսպանիան կամ Մեծ Բրիտանիան այնպիսի պետություններ են, որոնք ունակ են ընկալել դիմացիմի պրոբլեմները եւ հնարավորինս չխոչընդոտել դրանց լուծմանը: Այստեղ կենտրոնական կառավարությունը պատրաստ է բանակցություններ վարել անջատողականների հետ եւ որոշակի պայմաններում անգամ ճանաչել այդ տարածքների անջատման իրավունքը:

Բոլորովին այլ է իրադրությունը Բալկաններում, առավել եւս Չարավային Կովկասում: Այն երկրները, որոնք չեն կարող առաջարկել գրավիչ ինտեգրացիոն մոդելներ եւ չունեն անհրաժեշտ որակներ արդեն առկա մոդելներին միանալու համար, անում են ամեն ինչ, որ ապացուցեն սեփական գերակայությունը, որպեսզի իրենց կենտրոնական իշխանությունը հասնի բացարձակ մակարդակի: Նրանց համար անընդունելի է անգամ ինքնավարություններին որոշ իրավասությունների փոխանցման գաղափարը. արդյունքում՝ նրանք կանգնում են այդ ինքնավարությունները լրիվ կորցնելու փաստի առջեւ, ինչը մենք տեսնում ենք Սերբիայի, Վրաստանի եւ Ադրբեջանի դեպքերում:

Այնպես որ, քանի դեռ վերոնշյալ խնդրահարույց տարածքների վրա չի հայտնվել ԵՄ-ի «տանիքը», բոլոր առաջարկվող լուծումներն այդպես էլ կմնան կիսատ եւ անբավարար:

Եւս մի էական պահ: Դատելով Բալկանյան թերակղզում տեղի ունեցող վերջին զարգացումներից (Սլովենիայի կայացած եւ Բուլղարիայի ու Ռումինիայի կայանալիք միացումը ԵՄ-ին, Խորվաթիայի հետ ԵՄ-ին անդամակցելու բանակցությունների սկիզբը, Բոսնիայում ՆԱՏՕ-ի խաղաղապահ ուժերի փոխարինումը ԵՄ խաղաղապահներով, Կոսովոյի կարգավիճակի շուրջ բանակցությունների ընթացքը, բալկանյան երկրների բավական արագ ժողովրդավարացումը եւ ահա Մոնթենեգրոյի անկախացումը)՝ կարելի է պնդել, որ այս տարածաշրջանը գրեթե ամբողջությամբ հայտնվում է ԵՄ-ի ազդեցության գոտում, իսկ մոտ ապագայում նաեւ այդ Միության ամբողջական մաս կկազմի:

Արդեն հաջորդ տարի ԵՄ-ը պետք է որոշում կայացնի մինչեւ 2014թ. իր կազմի մեջ բալկանյան բոլոր երկրների ընդունման վերաբերյալ: Անգամ ծրագրվում է այդ տարի հուլիսի 1-ին Սարաեւոյում ԵՄ գազաթափողով անցկացնել, ինչով կխորհրդանշվի մայրցամաքում աշխարհամարտերի ժամանակաշրջանի (նույն քաղաքում հարյուր տարի առաջ սանձազերծված) ավարտը:

Ինչ-որ առումով այսօրվա Եվրոպայի բազմաթիվ պրոբլեմների արմատները պետք է փնտրել այն ազգային-քաղաքական-կրոնական հանգույցում, որտեղով տարածվում էր երբեմնի Օսմանյան կայսրու-

թյունը: Եթե նայում ես Բալկաններին, Կովկասին եւ Մերձավոր Արեւելքին, ապա տեսնում ես, որ հենց այստեղով էին անցնում օսմանների տերութեան սահմանները, իսկ այսօր հենց այստեղ են գտնվում մոլորակի ամենաթեժ կետերը: Ստեղծվել է խայտաբղետ թույլ պետություններից բաղկացած մի ցանց, որոնք փաստացի միջազգային կառավարման կարիք են զգում:

Բալկանյան ժողովուրդներն ամբողջ հարյուրամյակ ձգտում էին կառուցել իրենց ազգ-պետությունները Ավստրո-Հունգարական եւ Օսմանյան կայսրությունների փլատակների վրա: Սակայն, քանի որ նրանք անցնում են այդ ուղին բազում արյունալի բախումների եւ սեփական հասարակությունների թուլացման միջոցով, ապա ԵՄ-ը որոշել է փաստորեն ստանձնել բալկանյան պետությունները կայացնողի եւ երաշխավորի դերակատարումը: Ընդ որում, այդ դերակատարումը որոշակիորեն տարբերվում է այն դերից, որն իրականացնում էր Միացյալ Նահանգները Երկրորդ աշխարհամարտից հետո, երբ իր վրա վերցրեց Գերմանիայի եւ ճապոնիայի պետական վերակառուցման (nation-building կամ state-building) գործառույթը: Տվյալ դեպքում ԵՄ-ը կառուցում է «ի՛ր անդամ-պետությունները» (member-state building): Այս դեպքում Կոսովոյի նման պետությունները, դասական իմաստով, այլեւս չեն լինելու լիարժեք ազգ-պետություններ:

Այս ամենը ենթադրում է, որ օսմանյան միջնադարյան ժառանգության մնացորդները կլանվելու են Եվրոպայի նեոնոդեռնիստական կայսրության կողմից, առավել եւս, որ ծրագրվում է միացնել ԵՄ-ին այդ ժառանգության սիրտը՝ Թուրքիան:

Մայրցամաքի այլ մասերում եւս առկա են ազգային հողի վրա միատարրության նվազեցման միտումներ: Սլովակիայում եւ Ռումինիայում ապրում են բազմաթիվ հունգարացիներ, Հունգարիայում՝ սլովակներ, Բոսնիայի խորվաթներն ու սերբերն առանց այդ էլ անընդհատ մտածում են անջատվելու կամ իրենց մայր երկրներին միանալու մասին: Դա էլ ստիպում է ԵՄ-ին ու ՆԱՏՕ-ին եւ քաղաքական, եւ ուժային մեթոդներով վերահսկողություն սահմանել ամբողջ Արեւելյան եւ Հարավային Եվրոպայի նկատմամբ:

Ամեն դեպքում, այսօր Եվրոպայում գնում է ինչպես ինտեգրման, այնպես էլ մասնատման գործընթաց: Միաժամանակ, Եվրոպական քաղաքականության մեջ տարածում է գտնում «հարաբերական ինքնիշխանության» հայեցակարգը, որը մենք տեսնում ենք թե՛ Մեծ Բրիտանիայի կամ Իսպանիայի նման երկրների, թե՛ Սերբիայի, Մոնթենեգրոյի,

Կոսովոյի նման պետությունների մակարդակներում: Այն ենթադրում է ինչպես պետական սուվերենության կիսում կենտրոնական եւ ինքնավար մակարդակների միջեւ, այնպես էլ ԵՄ-ի եւ ՆԱՏՕ-ի նման վերազգային ուժերի կողմից որոշ եվրոպական պետությունների նկատմամբ վերահսկողության սահմանում:

Այդ պատճառով ԵՄ-ը եւ ՆԱՏՕ-ն շարունակելու են ընդլայնվել՝ անցնելով Բալկաններով, ապա հասնելով Կովկասյան լեռներ եւ Կասպից ծով:

Սակայն ԵՄ-ին միացումը մեխանիկորեն չի լուծի ազգամիջյան խնդիրները: Ավելի շուտ, Բալկանները եւ Կովկասը փորձադաշտ են, ուր կոմպակտ տարածքի վրա գոյատևում են տարբեր ազգեր եւ կրոններ, որոնց համագոյակցության մոդելներն Արեւմուտքը ներկայումս փորձարկում է՝ ապագայում դրանցից առավել հաջողվածները պրոյեկտելու համար Արեւմտյան Եվրոպայի երկրներում, որտեղ հետզհետե առաջանում են կրոնական եւ ազգային անկլավներ՝ ի դեմս ասիական եւ աֆրիկյան ներգաղթյալների:

ԻՍԼԱՄՆ ԱՄՆ-ում Արաբս Փաշայան

Իսլամն Ամերիկա է թափանցել 17-րդ դարի սկզբին, Աֆրիկայից՝ ստրուկների միջոցով: Աֆրիկյան մայրցամաքից Ամերիկա էին բերվում սեւամորթ մահմեդականներ, որոնց մեծ մասը «նոր հայրենիքում» հավատափոխ էր արվում եւ ձեռք բերում եվրոպական անուններ: Սակայն արդեն 20-րդ դարի սկզբին «սեւերի» շրջանում ի հայտ են գալիս ակունքներին վերադառնալու միտումներ, եւ իսլամն աստիճանաբար սկսում է ներկայացվել որպես այլընտրանք «սպիտակների» քրիստոնեությանը: 1913թ. Նյու Ջերսիում հիմնվում է առաջին մզկիթը:

Չնայած ի սկզբանե ԱՄՆ-ում միայն սեւամորթներն էին դավանում իսլամ, սակայն սկսած 1870-80-ական թվականներից՝ Միացյալ Նահանգներն իսլամադավան էմիգրացիոն խմբեր է ընդունում Մեծ Սիրիայից (սիրիացիներ, լիբանանցիներ, հորդանանցիներ)՝ հիմնականում աշխատավորներ:

1948թ. Իսրայել պետության ստեղծումից եւ արաբ-իսրայելական պատերազմից հետո ԱՄՆ են արտագաղթում պաղեստինցի առաջին գաղթականները: Երկրորդ աշխարհամարտի ավարտին ԱՄՆ-ում արդեն գործում էին 50-ից ավելի մզկիթներ:

1950 – 1960-ական թվականները նշանավորվում են ԱՄՆ սեւամորթ բնակչության իսլամական ինքնագիտակցության վերելքով: Դրան նպաստում են թե՛ ամերիկյան իշխանության խտրական քաղաքականությունը, թե՛ Մերձավոր եւ Միջին Արեւելքից ԱՄՆ-ում հաստատված էմիգրանտները: Այս շրջանում աֆրոամերիկացիները ստեղծում են առանձին կազմակերպություններ, որոնք իրենց ցեղակիցներին առաջարկում էին հրաժարվել ստիպողաբար ընդունած քրիստոնեությունից եւ վերադառնալ իսլամին՝ ուժացվելուց խուսափելու, աֆրիկյան ինքնությունը պահպանելու համար:

Այս նոր իրողությանը մեծապես նպաստեց 1960-ականների սկզբներին ԱՄՆ-ում մեծ թափ ստացած եւ հաջողությամբ պսակված ռասայական խտրականության դեմ շարժումը, որի առաջատարն էր սեւամորթ հոգեւորական Մարթին Լյութեր Քինգը: Այդ տարիների աֆրոամերիկյան մահմեդական երիտասարդության կուռքերից էր նշանավոր հասարակական գործիչ Մալքոլմ Էքսը, որը փոխեց իր քրիստոնեական անունը՝ դառնալով Էլ-Չաջջի Մալիք Էլ-Շաբազ:

1965թ. ազատականացվում են էմիգրացիոն օրենքները. եթե մինչև 1960-ականները ներգաղթածները հիմնականում չկրթված աշխատավորներ էին, ապա 1960-ականներից հետո ներգաղթողները որոշակի մասնագիտություն ունեցողներ են, որոնց կարիքն ԱՄՆ-ը ուներ: Դրանք, միաժամանակ, ազգային ինքնագիտակցություն ունեցող, սեփական մշակույթին եւ պատմությանը ծանոթ մարդիկ էին, որոնք մեծացել էին երկրորդ աշխարհամարտից հետո անկախություն ձեռք բերած ազգ-պետություններում: Նոր միջավայրում նրանք գիտակցում էին ազգային եւ կրոնական տեսանկյունից համախմբված ապրելու անհրաժեշտությունը:

Արդյունքում՝ ԱՄՆ-ի իսլամական սփյուռքը զգալիորեն աշխուժացավ՝ ընդունելով էթնոդավանական տարբեր խմբեր արաբական երկրներից, Պակիստանից, Զնդկաստանից, Բանգլադեշից: Այս շրջանից ի վեր զգալի թիվ սկսեցին կազմել նաեւ ուսանելու եկածները, որոնց մեծ մասը կրթությունը վերջացնելուց հետո հաստատվում էր ԱՄՆ-ում եւ աշխատանք գտնում իր մասնագիտությամբ:

Այս շրջանում իր գործունեությունն է ակտիվացնում 1931թ. ստեղծված եւ մինչեւ օրս գործող «Իսլամի ազգ» (Nation of Islam) կազմակերպությունը, որն աստիճանաբար դառնում է ազդեցիկ եւ հզոր կառույց: Արդեն տեւական ժամանակ կազմակերպության առաջնորդը հայտնի տեսաբան եւ հռետոր, արմատական համարում ունեցող գործիչ Լուիս Ֆարահանն է:

«Իսլամական ազգի» կորիզը աֆրիկյան ծագում ունեցող սուննի մահմեդականներ են: Նրա ակտիվիստները վստահ են, որ իսլամի միջոցով հնարավոր է պայքարել տարբեր արատների եւ հանցագործությունների դեմ, ինչպես նաեւ ինքնակատարելագործվել եւ կարգապահ դառնալ:

«Իսլամի ազգից» հետո աֆրիկյան ծագում ունեցող մահմեդականների ամենամեծ կազմակերպությունը «Ամերիկյան-մահմեդական առաքելությունն» է, որի ստեղծած կառույցները, որպես կանոն, կոչվում են «Մասջիդ Մուհամադ» («Մուհամադի մզկիթ»):

Առավել մեծ կազմակերպություններից է սպիտակների «ԱՄՆ-ի եւ Կանադայի մահմեդական ուսանողների ասոցիացիան»՝ իր 300 մասնաճյուղերով, որը նպատակ ունի օգնել մահմեդական երիտասարդներին ներգրավվելու ամերիկյան իրականության մեջ՝ առանց ինքնությունը կորցնելու: Ազդեցիկ կառույց է նաեւ «Մզկիթների խորհուրդը»՝ իր 100 մասնաճյուղերով, որ ձգտում է միավորիչ դեր խաղալ:

ԱՄՆ-ում իսլամական բնակչության ճշգրիտ թիվը հայտնի չէ: Վիճակագրական վերջին տվյալներով՝ այն հաշվվում է մոտ 7 միլիոն:

ԱՄՆ-ի մահմեդականները կրոնական փոքրամասնությունների մեջ չորրորդ տեղն են զբաղեցնում: Նրանց 1/3-ը աֆրիկյան ծագում ունի, մնացածը՝ ասիական: «Սեւ» իսլամի ներկայացուցիչները հաշվվում են շուրջ 4 մլն: *Pew Research Center for the People and the Press*-ի անցկացրած հարցախույզի տվյալներով՝ մահմեդականների 10%-ը ցածր կենսամակարդակ ունի, 52%-ը՝ միջին, իսկ 28%-ը իրեն կարող է համարել հարուստ մարդ՝ ի տարբերություն Արեւմտյան Եվրոպայի մահմեդականների, որոնց մեջ շատ են սեւագործ աշխատանքով զբաղվողները: Փաստորեն, ըստ հարցախույզի, ԱՄՆ-ում կան զգալի թվով ազդեցիկ մահմեդականներ: Ի դեպ, արվեստի ու սպորտի բնագավառում եւս հայտնի են բազմաթիվ հանրաճանաչ մահմեդականներ:

Մահմեդականները հոծ խմբերով ապրում են Նյու Յորքում, Կալիֆորնիայում, Նյու Ջերսիում, Վաշինգտոնում, Իլինոյսում, Մասաչուսեթսում, Օհայոյում: ԱՄՆ-ում գործում են իսլամական հարյուրավոր կենտրոններ, ցերեկային եւ կիրակնօրյա դպրոցներ, հազարից ավելի մզկիթներ: Ուշագրավ է, որ մզկիթներն իրենց ճարտարապետությամբ ավելի ամերիկյան, քան իսլամական մշակույթի կնիքն են կրում:

Սակայն, ընդհանուր առմամբ, իսլամական սփյուռքն ԱՄՆ-ում համախմբված եւ միասնական չէ, ինչը պայմանավորված է նաեւ էթնոդավանական տարբերություններով: Աֆրիկյան եւ ասիական ծագմամբ մահմեդականները շատ դեպքերում գործում են զուգահեռաբար, բայց անկախ:

ԱՄՆ-ում ապրող մահմեդական շրջանակները հիմնականում զերծ են արմատական տրամադրություններից, նրանցից շատերը նույնիսկ մզկիթ չեն հաճախում: Գրեթե չեն արձանագրվել այնպիսի դեպքեր, որ ահաբեկչությունների մասնակիցներ լինեն ԱՄՆ-ի իսլամադավան քաղաքացիները: Անգամ այս երկրում տեղի ունեցած ահաբեկչական գործողություններին ամերիկացի մահմեդականներ չեն մասնակցել: Արմատական իսլամական կազմակերպությունների թիվը քիչ է: Դրանցից է «Ջամաաթ ալ-Ֆուկրը», որի նպատակներից է ստեղծել իսլամական գետոներ ողջ ԱՄՆ-ի տարածքում: Հետաքննությունների դաշնային բյուրոյի 2006թ. տվյալներով՝ ԱՄՆ-ում գործում են այս կազմակերպության շուրջ երեք հազար ակտիվիստներ:

ԱՄՆ-ի մահմեդականների համար լուրջ մարտահրավեր էր սեպտեմբերի 11-ը: Կարծես դրանից հետո ամերիկացիները նկատեցին իրենց կողքին ապրող մահմեդականներին: ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշը կոչ արեց ազգին՝ ձեռնպահ մնալ մահմեդականների դեմ վրեժխնդրության գործողություններից, ինչից, սակայն, հնարավոր

չեղավ խուսափել. մահմեդական առանձին թաղամասեր ենթարկվեցին հարձակումների:

Միեւնույն ժամանակ, սեպտեմբերի 11-ը մեծացրեց հետաքրքրությունն իսլամի նկատմամբ: Ղուրանը եւ իսլամին վերաբերող գրքերը սկսեցին շատ ավելի լավ վաճառվել գրախանութներում: Մեծացավ իսլամական ինտերնետային կայքերից օգտվողների թիվը:

Արդի շրջանում իսլամական համայնքի առաջնային խնդիրներից է՝ չեզոքացնել իսլամի հանդեպ այն թյուր կարծիքը, որ ձեւավորել են ամերիկյան զանգվածային լրատվամիջոցները: Արդեն սկսել է գործել մահմեդական առաջին կաբելային անգլիալեզու հեռուստաընկերությունը՝ Bridges TV-ն, որ նպատակ ունի տալ իսլամի եւ ամերիկյան իսլամական սփյուռքի ճշմարիտ պատկերը:

The Pew Forum on Religion & Public Life-ի՝ 2005թ. անցկացրած հարցախույզը նպատակ ունի ճշտել ամերիկացիների դիրքորոշումը ԱՄՆ-ում ապրող մահմեդականների եւ իսլամի նկատմամբ: Հարցախույզի տվյալների համաձայն՝ ամերիկյան մահմեդականների նկատմամբ դրական է արտահայտվել հարցվածների 55%-ը, բացասական 25%-ը: Իսլամի նկատմամբ դրական է արտահայտվել հարցվածների 39%-ը, բացասական՝ 36%-ը: Ամերիկացիների 36%-ը համոզված է, որ իսլամն աջակցում է բռնությանը: 2004թ. նման տեսակետ էր արտահայտել հարցվածների 44%-ը: ԱՄՆ-ի այն շրջանակները, որոնք լավատեղյակ են իսլամին, լոյալ են վերաբերվում այդ կրոնին: Հակաիսլամական միտումներն ավելի ուժեղ են չկրթվածների շրջանում:

Զնայած սեպտեմբերի 11-ի իրողությանը, ԱՄՆ-ում մահմեդականներն իրենց համեմատաբար հանգիստ են զգում, նրանք ազատ դավանում են իրենց կրոնը, շփվում քրիստոնյաների եւ հրեաների հետ, մասնակից դառնում միջդավանական երկխոսությունների: Նրանք այժմ ավելի կազմակերպված են ապրում, գիտեն իրենց իրավունքները: Տեղական հեռուստատեսությամբ մահմեդականներին ողջունում են Ռամադանի կապակցությամբ:

Գրեթե բոլոր ուսումնասիրությունները փաստում են ԱՄՆ-ում մահմեդականների ժողովրդագրական աճը: Մասնավորապես, ամերիկյան բանակում մահմեդականները մեծ թիվ են կազմում: (Ծոցի առաջին պատերազմի ժամանակ իսլամ են ընդունել ավելի քան 3 հազար ամերիկացի զինծառայողներ):

Ի դեպ, ԱՄՆ-ում շատ են իսլամ ընդունելու դեպքերը հատկապես բանտերում, որտեղ ամեն տարի մահմեդական են դառնում շուրջ 135.000 բանտարկյալներ: Իսլամ է ընդունում աֆրիկյան ծագում ունեցող 10 բանտարկյալից մեկը: Նորադարձությունը պայմանավոր-

ված է գոյապահպանության հրամայականով: Իսլամական համայնքն օգնում է նորահավատներին եւ պաշտպանում նրանց իրավունքները: Բանտերում մահմեդական խմբերը համատեղ աղոթում են, կազմակերպում տարաբնույթ միջոցառումներ:

Իսլամական արժեքների հանդեպ հետաքրքրությունը պայմանավորված է նաեւ ամերիկյան բարոյականության սկզբունքների նկատմամբ եղած դժգոհությամբ:

Ինչեւէ, փաստ է, որ իսլամն այսօր իր հաստատուն տեղն ունի ԱՄՆ-ում եւ շոշափելի ազդեցություն՝ ամերիկյան մշակույթի վրա: Սոցիոլոգիական տվյալների համաձայն՝ 2010թ. ԱՄՆ-ում մահմեդական համայնքն իր թվաքանակով, քրիստոնյաներից հետո, կլինի երկրորդը՝ շրջանցելով հրեականը: Եվ թվում է, որ այս երկիրն այլեւս չի կարող միայն քրիստոնեությունն ու հուդայականությունը համարել իր հիմնական կրոնները եւ պետք է հաշվի նստի իսլամի հետ:

**ԱՐԵՎՍՈՒՏՔԸ ՄԱՅՍԵԴԱԿԱՆՆԵՐԻ ԱԶՔԵՐՈՎ.
ԿԵՐՊԱՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ
Սուրեն Մանուկյան**

Իսլամական հասարակությունների զանգվածային գիտակցության մեջ, Արեւմուտքի հետ կապված, գոյություն ունեն հստակ պատկերացումներ եւ կողմնորոշումներ:

Արեւմուտքի կերպարը ստեղծվում է կրոնական քարոզի, դասավանդվող պատմության եւ լրատվամիջոցների՝ հիմնականում հեռուստատեսության միջոցով:

Պատմության մեկնաբանությունը, կրոնական պատկերացումները, ավանդապատումներն ու նույնիսկ հեքիաթները հսկայական դեր են խաղում արեւելյան հասարակություններում՝ այլ քաղաքակրթությունների նկատմամբ վերաբերմունք ձեւավորելու գործում:

Ըստ հայտնի ֆրանսիացի պատմաբան Մարկ Ֆերոյի, եթե կան հասարակություններ, որտեղ գերակա դիրք է զբաղեցնում պատմությունը, ապա դրանք իսլամական պետություններն են: Սա համեմատաբար նոր երեւոյթ է, որն ի հայտ է եկել մոտ մեկ դար առաջ՝ Եվրոպայի գաղութային էքսպանսիայի դեմ պայքարի ժամանակաշրջանում, երբ տեղի ունեցավ կրոնի կողմից նախկինում երկրորդ պլան մղված պատմության վերածնունդը: Պատմության դերն ավելի կարեւորվեց, երբ անկախություն ձեռք բերած մահմեդական երկրներում ազգային ինքնագիտակցության շեշտակի վերելք արձանագրվեց:

Պատմությունը դարձավ ռազմավարական գիտություն, որը պետք է օրինականացներ նորաստեղծ մահմեդական պետությունների ձգտումները եւ նկրտումները: Այն ստացավ քարոզչական նշանակություն եւ կատարում է պետության համար անհրաժեշտ աշխարհայացք ունեցող քաղաքացու դաստիարակության գործառույթ:

Արեւմտյան դասագրքերը եվրոպակենտրոն են: Հիմնական պատմական իրադարձություններն այնտեղ մեկնաբանվում են հենց Եվրոպայի եւ եվրոպացու տեսակետից, իսկ այն, ինչ դրանից դուրս է, միգրացե հետաքրքիր է, խորհրդավոր, սակայն «Եվրոպական պատմության» համար ոչ այդքան էական: Մահմեդական երկրներում ամեն

ինչ այլ կերպ է: Այստեղ կա հստակ դիրքորոշում «Եվրոպական աշխարհի նկատմամբ»: Այս դիրքորոշումը չեզոք չէ, այն բացասական է կամ մրցակցային: Եթե ԱՄՆ-ում կամ Եվրոպայում պատմությունը շարադրվում է հիմնականում «մենք»-ի տեսանկյունից, ապա մահմեդական աշխարհում «մենք-մրանք» հակասությունն ակնհայտ է:

Այս պարագայում կան մի շարք թեզեր, որոնք ընդհանուր են, օրինակ, արաբական երկրների դասագրքերում, եւ առանցքային են մահմեդական երկրներում պատմության մատուցման համար:

ա) Արեւելքը պատմականորեն զարգացման ավելի բարձր աստիճանի վրա է գտնվել:

Եվրոպական քաղաքակրթությունը համարվում է երիտասարդ եւ նույնիսկ այսօր նրա՝ շատ դեպքերում սխալ քայլերը հենց պատանեկան անփորձությանն են վերագրվում: Միջնադարյան Եվրոպան գնահատվում է Արեւելքի հետ համեմատությամբ, եւ ընդգծվում է Արաբական խալիֆայության ծաղկման փայլը Եվրոպայի «խավարի» դարերի ֆոնին: Իսկ աշխարհագրական Մեծ հայտնագործությունների պատմությունն արաբական դասագրքերում սկսվում է ոչ թե Կոլումբոսի կամ Մագելանի ճանապարհորդություններից, այլ Զնդկական օվկիանոսում փյունիկցիների եւ արաբների նավարկություններից:

բ) Խաչակրաց արշավանքները Եվրոպայի առաջին ագրեսիան են Արեւելքի նկատմամբ:

Խաչակրաց արշավանքները, որոնք այսօր ամենասիրված թեմաներից են Արեւմուտք – Արեւելք հակասության պարագայում, իրականում միայն 19-րդ դարից են կարեւորվել իսլամական երկրների պատմության մեջ: Մինչ այդ, այս իրադարձությունների մատուցումը ոչ մի բանով չէր տարբերվում այն շարունակական պատերազմների ներկայացումից, որ արաբները վարում էին իրենց կայսրության սահմաններում: Այժմ խաչակրաց արշավանքներն արդեն «կանոնականացված» են եւ հարմար կերպով տեղավորվում են արաբական ազգի ճակատագրի ու ջիհադի հայեցակարգի մեջ: Մասնավոր դեպքերը մոռացության են մատնվում. օրինակ, այն, որ Երուսաղեմի ազատարար Սալահ էդ-դինն ազգությամբ քուրդ էր, իսկ արաբական էմիրները բավական հաճախ նույնիսկ դաշնակցում էին քրիստոնյա ասպետների առաջնորդների հետ, որոնցից մեկի արդյունքում՝ 1229թ., Երուսաղեմն անցավ գերմանական կայսր Ֆրիդրիխ Երկրորդի ձեռքը: Զիմնական շեշտը դրվում է

քաղաքակրթական բախման վրա. «Արեւմուտքը մարտահրավեր էր նետել Արեւելքին եւ ի վերջո պարտվեց»:

գ) Գաղութատիրությունն է իսլամական երկրների տնտեսական հետամնացության պատճառը:

Այսօրվա հետամնացությունը մահմեդական աշխարհում ընդունված է բացատրել գաղութարար պետությունների կողմից իրականացված՝ այդ երկրների անխնա կողոպուտով:

Արեւելյան պատմաբանները պնդում են, որ գաղութատիրությունը, որն Արեւմուտքին տվեց հսկայական տնտեսական հարստություն, հաղորդակից դարձրեց զարգացած մուսուլմանական մշակույթին ու քաղաքաշինությանը, Արեւելքին միայն վնաս պատճառեց: Այն կորցրեց իր երբեմնի փառքը եւ ընկավ եվրոպացիների լծի տակ: Ֆրանսիական եւ բրիտանական գերիշխանության շրջանում եվրոպացիների քաղաքական ներթափանցումը, ինչպես նաեւ երկարաժամկետ, խոր եւ նենգ մշակութային ազդեցությունը փոխեցին տարածաշրջանի դեմքը եւ նրա ժողովուրդների զարգացման բնական ուղին:

դ) Եվրոպական իմպերիալիզմի դեմ պայքարը սեփական ինքնության պահպանման կարեւոր պայմաններից է:

Սա միգուցե ամենակարեւոր հետեւությունն է, որ պետք է անեն աշակերտները դպրոցներում պատմության ուսումնասիրության ժամանակ: Գաղութարարների դեմ պայքարն իրոք առանցքային է մերձավորարեւելյան ժողովուրդների պատմության մեջ: Դրանով մահմեդականների գիտակցության մեջ եվրոպացիների կերպարն ամրագրվում է՝ իբրեւ հակառակորդի, որին պետք է հաղթել՝ սեփական արժանապատվությունը վերականգնելու համար:

* * *

Վերոհիշյալ կարծրատիպերը, որոնք գերիշխում են հանրային գիտակցության մեջ, օգտագործվում են լրատվամիջոցների կողմից եւ ամրապնդվում հետեւողական քարոզչությամբ:

Մահմեդական երկրների մեծ մասում նույնիսկ մասնավոր լրատվամիջոցները, հիմնականում, աշխատում են դուրս չգալ պետական պատվերի շրջանակներից: Հեռուստատեսության համընդհանուր վերահսկողությունը թույլ է տալիս բավական հեշտությամբ կառավարել հասարակական տրամադրությունները՝ ուղղակիորեն ներարկելով հեռուստալսարանին անհրաժեշտ պատկերները:

Վերոնշյալ կարծրատիպերին, որոնք աշխատում էին հիմնականում պատմական հիշողության դաշտում, ավելանում են նորերը, որոնք փորձում են ստեղծել տրամաբանական մեկնաբանության պատկեր եւ կապված են ժամանակակից զարգացումների հետ:

ա) Գոյություն ունի հրեական դավադրություն, եւ իսլամական աշխարհը դրա զոհն է:

Յրեաներին բոլոր մեղքերում մեղադրելն ամենասիրված թեմաներից է իսլամական ՁԼՄ-ում: Սա նույնպես համեմատաբար նոր երեւոյթ է: Յրեաները դարեր շարունակ ապրել են իսլամական հասարակություններում եւ ավելի պաշտպանված են եղել, քան, օրինակ, քրիստոնեական երկրներում: Նրանց նկատմամբ կար ավելի շուտ արհամարհական, քան թշնամական վերաբերմունք, եւ հետեւաբար ավելի մեծ էր 1948թ. «մի խումբ քամահրելի հրեաներից» կրած պարտության հոգեբանական հարվածը: Դավեր նյութող հրեայի դիվականացված կերպարը որոշակիորեն մեղմեց պարտության ամոթի զգացումը: Ի հայտ եկավ մի իրավիճակ, երբ բոլոր չարիքները սկսեցին վերագրվել հրեաների գաղտնի դավադրություններին: Նման մեկնաբանությունները գերիշխում են իսլամական աշխարհում՝ հրապարակային հայտարարություններում, կրթական հաստատություններում, մամուլում:

բ) Արեւմուտքն աջակցում է հրեական դավադրությանը, ինչպես նաեւ Իսրայելին՝ արաբ-իսրայելական հակամարտության հարցում:

Յամարվում է, որ Արեւմուտքը դարձել է հրեական դավադրության հիմնական գործիքը: Արեւմտյան կառավարությունները վերահսկվում են հրեաների կողմից, որոնք ուղղորդում են ԱՄՆ-ի եւ եվրոպական շատ պետությունների քաղաքականությունը: Եվրոպան ու ԱՄՆ-ը հրեական պետությանը հսկայական տնտեսական, ռազմական եւ քաղաքական օգնություն են ցույց տալիս եւ արաբ-իսրայելական հակամարտության հարցում կողմնակալ են: Սա մահմեդական աշխարհի զայրույթի հիմնական պատճառներից է:

գ) Արեւմտյան սպառողական հասարակությունը վտանգավոր է, քանի որ ծաղրում է եւ անարգում մահմեդական ավանդույթները:

Արժեքային համակարգին սպառնացող վտանգն ամենասուր կերպով է ընկալվում մահմեդական հասարակություններում: Այն սերտորեն կապված է սեփական մշակութային եւ քաղաքակրթական ինքնատիպության կորստի վախի հետ. Արեւմուտքն այս պարագայում ընկալվում է

իբրև մշակութային էքսպանսիայի սուբյեկտ, որի զանգվածային մշակույթը նվաճում է ամբողջ աշխարհը: Այս իրավիճակը վերաճում է իսկական «խորհրդանիշների պատերազմի»։ փորձ է կատարվում հրապարակային հակազդեցություն ցուցադրել իսլամական խորհրդանիշների դեմ ուղղված ցանկացած ոտնձգության դեմ: Այս առումով, պատահական չէին եվրոպական մամուլում տպագրված Մուհամեդ մարգարեի ծաղրանկարների շուրջ ծավալված բուռն իրադարձությունները, հիջաբի՝ մահմեդական կնոջ գլխաշորի տարածման նոր թափը նույնիսկ աշխարհիկ պետություններում: Ավելին, մի շարք երկրներում (օրինակ, Թուրքիայում) իսլամիստական կուսակցությունների հաղթանակներն ընտրություններում շատերը համարում են հենց այդ հակազդեցության արտահայտություն:

դ) Արեւմուտքը փորձում է տարածել սեփական արժեքները, որոնք չեն համապատասխանում իսլամական պետությունների շահերին:

Իսուքն, առաջին հերթին, արեւմտյան դեմոկրատիայի մասին է, որը հստակ արեւմտականացման բաղադրիչ է պարունակում: Իսլամական հասարակությունները չեն թերագնահատում ժողովրդավարության նվաճումները, սակայն դեմ են դրա մեխանիկական ներդրմանն՝ առանց հաշվի առնելու տարբեր հասարակությունների ավանդույթները:

Բացի այդ, այսօր ժողովրդավարական գաղափարախոսությունն ամենամեծ չափով վարկաբեկվում է այն տարածողների «շնորհիվ»: Այն վերածվել է մարտավարական զենքի, որի միջոցով արեւմտյան տերությունները եւ, առաջին հերթին, ԱՄՆ-ը փորձում են սեփական ազդեցությունը տարածել:

ե) Արեւմուտքը փորձում է նորից գաղութացնել իսլամական աշխարհը:

Ամերիկյան հայտնի Pew Global Attitudes Project ընկերության կողմից ամբողջ աշխարհում իրականացված հարցումը ցույց է տալիս, որ ԱՄՆ-ի կերպարը մահմեդական երկրներում գնալով ավելի բացասական է դառնում: 2006թ. սկզբին Եգիպտոսի եւ Ինդոնեզիայի բնակչության ընդամենը 30%, Պակիստանի 27, Հորդանանի 15 եւ Թուրքիայի 12%-ն է դրական վերաբերմունք արտահայտել Միացյալ Նահանգների նկատմամբ:

Այս ամենն ապացուցում է, որ, օրինակ, արաբական աշխարհում սեփական իմիջի բարելավման համար Վաշինգտոնի կողմից ծախսված հսկայական միջոցներն արդյունավետ չեն: Ամերիկյան վարչակարգի կողմից ստեղծված «ալ Սավա» ռադիոկայանը եւ «ալ Հուրրա»

հեռուստակայանը, որոնց վրա էր դրված այս խնդրի իրականացումը, այդքան էլ արդյունավետ չեն գործում: Բացի այդ, շատ դժվար է ձեւավորել ԱՄՆ-ի դրական կերպարը՝ Իրաքում ամերիկյան զորքերի ներկայության պարագայում:

Brookings Institution-ի ավագ գիտաշխատող Շիբլի Թելիամիի՝ Սերժավոր Արեւելքում անցկացրած հարցումները ցույց են տվել, որ արաբների ճնշող մեծամասնությունը ԱՄՆ արտաքին քաղաքականության հիմնական նպատակներն է համարում «պայքարը նավթի համար», «Իսրայելին աջակցությունը» եւ «իսլամական քաղաքակրթության թուլացումը»: Իսկ ամերիկյան քաղաքականության հիմնական նպատակներ հռչակված «Ժողովրդավարության տարածումը» կամ «ազատության աջակցությունը» մահմեդականների կողմից համարվում են ուղղակի քարոզչական հնարքներ:

ԱՐԴԻ ԳԼՈՐԱԼԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Գեորգի Վելյամինով

(հատված «Ռուսաստանը եւ գլոբալացումը» հոդվածից)

Արդի գլոբալացման առանձնահատկությունները

Ներկայիս գլոբալացման եւ պանամերիկանիզմի միջեւ միանգամայն տեղին է հավասարության նշան դնելը. գլոբալիզացիոն համակարգի կառուցման լոկոմոտիվն այսօր Միացյալ Նահանգներն է:

Ամերիկայի գլոբալ-կայսերական հավակնությունների գաղափարախոսական հենքը (նախագահ Վուդրո Վիլսոնի ժամանակներից սկսած) ԱՄՆ քաղաքակրթիչ բացառիկ առաքելության փրկչական (մեսիական) գաղափարն է, որը ենթադրում է «Pax Americana»-ի (ամերիկյան աշխարհի-խմբ.) կառուցում: Պրովիդենցիալ (նախախնամությամբ տրված) այս գաղափարն այսօր տիրում է համաշխարհային կայսրության ամերիկյան ճարտարապետների մտքերին:

1990-ականներից Միացյալ Նահանգների վարչակազմը բռնեց գլոբալ ռազմաստրատեգիական գերակշռության բացահայտ ուղի:

Ինչ վերաբերում է առեւտրաֆինանսական գլոբալացմանը, ապա այստեղ Վաշինգտոնի քաղաքականությունը որոշվում է ԱՄՆ խոշոր կապիտալի տնտեսական շահերով: Ընդ որում, նման գլոբալացման բոլոր իրական «հաջողությունները» գործնականում կենտրոնացած են տնտեսական էքսպանսիոնիզմի ոլորտում (միջազգային առեւտուր, ֆինանսական տրանսֆերտներ եւ ներդրումներ եւն):

Նույնիսկ, այսպես կոչված, մշակութային գլոբալացումն, ըստ էության, ավելին չէ, քան առեւտրային էքսպանսիայի լուսանցքային արդյունք. ընդ որում, զանգվածային մշակույթի գլոբալ տարածման շարժիչ ուժը Միացյալ Նահանգների մշակութային ինդուստրիան է:

Գլոբալացման սոցիալական բաղադրիչը բացասական է գնահատվում: Իլինոյսի համալսարանի (ԱՄՆ) պրոֆեսոր Ռոբերտ Մաքչեսնիի խոսքերով՝ «գլոբալացման քաղաքականությունը հանգեցրել է սոցիալական եւ տնտեսական անհավասարության զգալի աճի, աշխարհի ամենաաղքատ ազգերի ու ժողովուրդների կացության էլ ավելի վատթարացման...»: «United States Command, Vision for 2020»-ի ծրագրային փաստաթղթում նշվում է, որ «համաշխարհային տնտե-

սուբյան գլոբալացումը շարունակվում է, իսկ «ունեւորների» եւ «չքավորների» միջեւ վիհը՝ մեծանում»: Այդ վիհն էլ հենց հանդիսանում է հանցագործությունը, ահաբեկչությունը, թմրամոլությունն ու նման արատները սնող միջավայր: Սակայն այս իրավիճակի շտկման համար ոչինչ չի արվում:

Գլոբալացումը կործանարար ազդեցություն է թողնում նաեւ շրջակա միջավայրի վրա: Անգամ մթնոլորտի աղտոտվածությունը բազմակողմ հիմքի վրա սահմանափակելու համեստ փորձը (1997թ. Կիոտոյի արձանագրությունը, որը մասնակից երկրների համար նախատեսում է ջերմոցային գազերի արտանետման վրա քվոտաների սահմանում) աջակցություն չստացավ ամենագլխավոր «աղտոտողների»՝ Միացյալ Նահանգների ու Չինաստանի կողմից:

Արդի գլոբալացման կարեւորագույն համակարգակազմիչ առանձնահատկությունը նրա վառ արտահայտված կառավարելիությունն է: Թեեւ գլոբալացման գործընթացներն օբյեկտիվորեն պայմանավորված են երկրագնդի վրա կյանքի ընդհանուր ինտերնացիոնալացմամբ եւ, թվում է, թե տարերայնորեն են, սակայն իրականում դրանք հմտորեն ուղղորդվում են դեպի շուկայական տնտեսության հուն՝ նրա հայեցակարգորեն կապիտալիստական, նեոազատական մոդելի շրջանակներում: Գլխավոր ղեկավարող ուժն, անշուշտ, ԱՄՆ-ն է՝ միջազգային մեզակապիտալի պատվարը:

Կառավարման առավել գործուն է հուսալի մեթոդը իրավունքն է: Սակայն գլոբալացումը՝ որպես այդպիսին, չի կարող անմիջականորեն ձեւավորել իրավունք, քանզի վերջինս պետական կամքի դրսեւորում է, իսկ միջազգային իրավունքը (այդ թվում՝ տնտեսական ոլորտում) արտահայտում է պետությունների համաձայնեցված կամքերը: Ժամանակակից աշխարհում նման համաձայնությունը կայանում է բանակցությունների ընթացքում, առաջին հերթին՝ միջազգային կազմակերպությունների անդամ երկրների միջեւ, իսկ առեւտրատնտեսական գլոբալիզացիոն հարաբերությունները կարգավորվում են Առեւտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) շրջանակներում:

Ինչ վերաբերում է արժուքա-ֆինանսական հարաբերություններին, ապա Բրեթոն-Վուդի համակարգի փլուզման հետ (1972թ.)՝ արժուքային փոխարժեքները, կապիտալի վերազգային տրանսֆերտները միջազգային իրավական բազմակողմ մակարդակում էականորեն չեն կարգավորվում:

Դա վերաբերում է նաեւ արտադրության ոլորտին: Ինչպես գրում են անգլիացի հեղինակավոր հետազոտողները, այսօր «արտադրության

գլոբալացումը զգալի չափով իրականացնում են վերազգային կորպորացիաները, որոնք մնում են արդի համաշխարհային տնտեսության միջուկը»: Բոլոր խոշորագույն վերազգային կորպորացիաների (ՎԱԿ) շուրջ 25%-ը տեղակայված է Միացյալ Նահանգներում: ՎԱԿ-երի համար, բնականաբար, պետական կամ միջպետական որեւէ միջամտություն իրենց գործունեությանն ամենեւին էլ ցանկալի չէ: Սակայն, այսպես կոչված ոչ առեւտրային (քաղաքական) ռիսկերով երկրներում հույժ կարեւոր է ուղղակի ներդրումների պաշտպանությունը դրանցից, եւ այն հիմնականում իրականացվում է ներդրումների խրախուսման ու պաշտպանության մասին միջազգային երկկողմ համաձայնագրերի շրջանակներում, ինչպես նաեւ Ներդրումային երաշխիքների բազմակողմ գործակալության (MIGA) միջոցով:

Կողմնակիցները, հակառակորդները եւ գաղափարական ոգեշնչողները

Գլոբալացման էությունն ու հեռանկարները գիտնականների կողմից տարբեր կերպ են գնահատվում:

Ուղղափառ գլոբալիստները (հիպերգլոբալիստներ) գլոբալացումը դիտում են որպես գլոբալ քաղաքակրթության նոր դարաշրջան, որի շարժիչ ուժերն են կապիտալիզմը եւ նոր տեխնոլոգիաները: Ազգային պետություններն անկում են ապրում, իսկ մարդկային ճակատագրերն ամբողջովին կախված են միջազգային շուկայում տիրող կարգերից:

Վերափոխիչների (տրանսֆորմիստներ) կարծիքով, գլոբալացումը խորապես ձեւափոխում է համաշխարհային քաղաքականությունը, պետական իշխանությունն ու հասարակությունը, որոնք փորձում են ադապտացվել առավել փոխկապակցված եւ արագ փոփոխվող աշխարհում: Սակայն, քանզի ինտեգրացմանն ուղեկցում է հատվածականությունը, ապա գլոբալացման հետագա զարգացման կայունությունն այդ գիտնականների կողմից կասկածի տակ է դրվում:

Թերահավատները համարում են, որ գլոբալացումը միջ է: Խոսք կարող է գնալ սոսկ տարածաշրջանային երեք հիմնական դաշինքների, քաղաքակրթությունների բախման եւ Զարավի լուսանցքայնացման մասին: Ազգային կառավարությունների իշխանությունը մնում է անփոփոխ եւ չափազանց հզոր, ինտերնացիոնալացումը կախված է պետությունների միջեւ համաձայնությունից: Աշխարհն այսօր նույնիսկ ավելի քիչ է փոխկախվածության մեջ, քան 19-րդ դարի 90-ականներին:

Հակագլոբալիստները, որոնցից ոմանք իրենց կոչում են

ալտերգլոբալիստներ, գործնականում հանդես են գալիս ոչ թե ինքնին գլոբալացման գործընթացի, այլ նրա նպատակների ու մեթոդների դեմ: Դիմակայությունն արդի միակողմանի գլոբալացմանը - «համընդհանուր ապրանքայնացմանը եւ աշխարհի մասնավորեցմանը» - իրականացվում է ինտերնացիոնալ, այսինքն՝ գլոբալ մասշտաբով. ճիշտ է, երբեմն նաեւ փողոցային անկարգությունների ձեւով:

Շուկայական գլոբալացման գաղափարական հենքը նեոազատականությունն է: Նրա հետեւորդների կարծիքով, ազատ շուկային այլընտրանք չկա: Ինչպես իր «Կապիտալիզմ եւ ազատություն» գրքում նշում է նեոազատական գուրու Միլթոն Ֆրիդմանը, քանի որ շահույթ ստանալը հենց ժողովրդավարության էությունն է, ուստի ցանկացած կառավարություն, որն անցկացնում է հակաշուկայական քաղաքականություն՝ հակաժողովրդավարական է:

Լինելով յուրատեսակ դավանաբանություն՝ նեոազատականությունը պատված է սրբազան լուսապսակով. այս հավատքի աստվածը Կապիտալն է, տաճարը՝ Ազատ շուկան: Ունի նաեւ իր ավետարանը, այսպես կոչված՝ «Վաշինգտոնյան համաձայնությունը» (երկրներին առաջարկված միջոցառումների համալիր՝ նրանց տնտեսությունը բարեփոխելու համար-խմբ.): Այս եզրը, որ քաղաքական առօրյա մտցվեց անցած դարի վերջին՝ տնտեսագետ Ջոն Ուիլյամսի կողմից, կոչված է ընդամենը այս աշխարհի մեծերի վիրտուալ համաձայնությունն ուրվագծելու, որոնք առավել խոցելի երկրների ու ընկերակցությունների վերաբերյալ ընդունում են կարեւորագույն որոշումներ եւ դրանք կենսագործում միջազգային՝ հիմնականում Միացյալ Նահանգների կողմից վերահսկվող հաստատությունների միջոցով:

Մինչդեռ, գլոբալացման՝ այսօր գերակշռող նեոազատական հայեցակարգային մոդելն այնքան էլ անվնաս չէ, ինչպես կարծում են նրա ջերմ կողմնակիցներից շատերը: Երկրորդ աշխարհամարտից հետո ազատականացումն ազատ մրցակցության դրոշի ներքո, որպես համադարձան բոլոր չարիքների, դարձավ Տարիֆների եւ առեւտրի մասին գլխավոր համաձայնագրի (ՏԱԳՀ) առանցքը. այդ դրոշը մինչ օրս էլ ծածանվում է ԱՅԿ գլխին: Սակայն, ինչպես վկայում է Մասաչուսեթսի համալսարանի (ԱՄՆ) պրոֆեսոր Նոան Յոնսկին, «*շուկաներում մրցակցությունը բավական հազվադեպ է պատահում: Տնտեսության մեծ մասը վերահսկվում է խոշոր կորպորացիաների կողմից, որոնք լիովին իշխում են իրենց շուկաներում*»:

Արդյունքում՝ ՏԱԳՀ հովանու ներքո եւ, ըստ էության, ողջ կապիտալիստական աշխարհի շրջանակներում իրականացվեց արդյունաբե-

րական ապրանքների ներմուծման մաքսային տարիֆների իրավական ազատականացման տպավորիչ ծրագիր: Նրանց վրա ներմուծման տուրքերի միջին մակարդակը ՏԱԳՀ մասնակից երկրների համար իջեցվեց 40%-ից (1948թ.) մինչև 4% (1990թ.): Սակայն ազատականացումը, որն ի սկզբանե հռչակել է Laisser faire, laisser passer («մի՛խանգարեք գործարար ակտիվությանը, մի՛խանգարեք սահմանները հատելուն») սկզբունքը, ընդունեց խիստ միակողմանի բնույթ, քանզի ենթադրում է, որ աղքատ ու թույլ երկրները պետք է բացեն իրենց շուկաները հարուստ եւ հզոր պետությունների արդյունաբերական ապրանքների համար, իսկ վերջիններս էլ իրենց իրավունք են վերապահում թույլ երկրների գյուղատնտեսական, տեքստիլ եւ այլ ներմուծումներից հովանավորչական պաշտպանություն ունենալ: Նման մոդելը կարելի է անվանել էքստրավերտիվ (դեպի արտաքին աշխարհ ուղղված) ազատականություն, որը միտված է ոչ թե սեփական, այլ արտասահմանյան շուկայի ազատականացմանը: Այլ կերպ ասած՝ ի հայտ է գալիս արտասահմանյան շուկաներ սեփական արտադրանքի արտահանման առանձնահատուկ հովանավորչություն:

Բայց ինչո՞ւ առավել թույլ երկրները գնացին նման անհավասարազոր՝ միաժամանակ իրավաբանորեն ամրագրված համագործակցության: Որպեսզի դա նրանց հարկադրեն, գործի դրվեցին տնտեսական ու քաղաքական բազում լծակներ. օրինակ՝ վարկերից, ֆինանսական եւ մարդասիրական օգնություններից զրկելու սպառնալիքները: *«Ձարգացող երկրների պարտքերն Արժույթի միջազգային հիմնադրամի ու Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի համար լծակ ծառայեցին՝ ստիպելու Երրորդ աշխարհի երկրների կառավարություններին՝ 1980-ականներին ընդունել «կառուցվածքային կարգավորման» նեոազատական ծրագրերը, իսկ կոմունիզմի կրախն ԱՄՆ-ին թույլ տվեց օժանդակել Արեւելյան Եվրոպայի ու նախկին ԽՍՀՄ երկրներին՝ «շուկային թերապիայի» անցկացման գործում»* (Ուոլդեն Բելո): Եվ բացի այդ՝ լավ է խաղալ երկրորդական դերեր, քան լինել հետնապահ կամ, որ ավելի վատ է՝ լուսանցքային երկիր:

«Россия в глобальной политике». № 3, 2006

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Սարգիս Հարությունյան ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ՎՐԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋ. <i>ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ</i>	1
Արտակ Շաքարյան ՌՈՒՄ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՓՈՒԼԸ	6
Գագիկ Տերտերյան ԱՇԽԱՐՀԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ	11
Սեւակ Սարուխանյան ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՍՊԻՑԻ ԷՆԵՐԳԱԿԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ	16
Սուրեն Սարյան ԵՎՐՈՊԱՅԻ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԱՆԿԱԽԱՑՈՒՄՆԵՐԻ ՆՈՐ ԱԼԻՔԸ	21
Արաքս Փաշայան ԻՍԼԱՄՆ ԱՄՆ-ՈՒՄ	29
Սուրեն Մանուկյան ԱՐԵՎՄՈՒՏՔԸ ՄԱՅՄԵՂԱԿԱՆՆԵՐԻ ԱՉՔԵՐՈՎ. ԿԵՐՊԱՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ	34
Գեորգի Վելյամինով ԱՐԴԻ ԳԼՈԲԱԼԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ	40

*Շապիկի վրա պատկերված են
Վանա լճի հարավային ափը (Խորզոմ գյուղ),
հեռվում՝ Արտոս լեռը*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի
Հանրապետական կուսակցության հրատարակություն
Խմբագրական խորհուրդ
Երեւան, 375010, Սելիք-Աղանյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:
Էլ. փոստ՝ hanrapetakan@hkh.am:
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:
Պայմանական 3,5 մամուլ: Տպաքանակը՝ 1000:
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:
Վկայական՝ ՕՄՄ 000176:
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: